«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԼՈՌՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Երևան – 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ԼՏՊՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է ԼՏՊՔ-ի ներկայացրած դիմումի համաձայն:

Հավատարմագրման գործընթացը կազմակերպել և համակարգել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ)՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Սույն զեկույցը պարունակում է ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 10

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 15

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 15

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 17

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 19

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 26

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 30

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 34

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 36

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 39

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 41

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 43

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 46

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 47

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ ... 47

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 48

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 50

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 54

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ ԼՏՊՔ-ն տարածաշրջանային ուղղվածություն ունեցող պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը տարածաշրջանի կարիքներից ելնելով ՈԱԾ 5-րդ մակարդակին համապատասխան որակավորում ունեցող շրջանավարտների պատրաստումն է: Փորձագիտական խումբը նաև հաշվի է առել, որ ԼՏՊՔ-ն առաջին անգամ է անցնում հավատարմագրման գործընթաց:

ԼՏՊՔ կողմից առաջարկվող մասնագիտությունները բխեցված են Լոռու մարզի տնտեսության կարիքներից, մասնավորապես՝ մասնագիտությունների մի մասն ավանդական է քոլեջի համար և սպասարկում է թեթև արդյունաբերության ոլորտը, իսկ մասնագիտությունների մյուս մասն առավել արդիական է, մասնավորապես՝ ՏՏ ոլորտ, զբոսաշրջություն և այլն: Առաջարկվող մասնագիտությունների կրթական ծրագրերը մեծապես հիմնված են համապատասխան պետական կրթական չափորոշիչների վրա, և պլանավորման մակարդակում քոլեջն ազատ չէ ծրագրային խոշոր փոփոխություններ իրականացնելու հարցում: Փաստացի ընթացող ուսումնական գործընթացում, սակայն, քոլեջի դիրքորոշումը շատ ավելի ազատական է, մասնավորապես՝ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունը քոլեջում ազատականացված է և կախված է դասախոսից: Նման իրավիճակում առաջանում են պլանավորած և փաստացի ձեռքբերված արդյունքների անհամապատասխանության ռիսկեր, որոնց չեզոքացման մեխանիզմներ քոլեջը դեռևս չունի: Նշված վտանգներն առավել իրական են այն պայմաններում, երբ դեռևս ձևավորված չեն դասախոսների հավաքագրման և գնահատման համակարգերը: Բացի այդ՝ ծրագրերում թերի է իրականացվում գործնական հմտությունների ապահովման բաղադրիչը, իսկ գործատուների՝ ծրագրերի գնահատման և վերանայման գործընթացներում ներգրավվածության խիստ մասնակի և չկանոնակարգված լինելը վտանգում է կայուն համապատասխանությունն աշխատաշուկայի պահանջներին: Ավելին՝ թեև քոլեջը ՊՈԱԿ է և պետական բյուջեից ֆինանսավորում ստանալով՝ ֆինանսապես կայուն է, սակայն ռեսուրսային բազան սարքավորումների, ծրագրային ապահովման և գրականության մասով հետ է աշխատաշուկայի պահանջներից:

Կառավարման գործընթացները ԼՏՊՔ-ում կրում են օպերատիվ բնույթ, և նույնիսկ կառավարման ամենաբարձր մարմինները չեն առաջադրում ռազմավարական խնդիրներ:

Արդյունքում քոլեջում իրականացվող կառավարման գործընթացները չեն կրում ռազմավարական բնույթ. օպերատիվ կառավարում իրականացվում է, ստորաբաժանումները պլանավորում են իրենց տարեկան գործունեությունը, սակայն այդ պլանները չեն բխեցվում ռազմավարական նպատակներից և չեն ծառայում դրանց: Իրերի նման դրության հիմնական պատճառներից է, թերևս, գործընթացներին քննադատորեն վերաբերվելու մոտեցման պակասը, ինչն ազդում է նաև որակի ներքին ապահովման համակարգի վրա: Վերջինիս գործունեությունը դեռևս չի կարևորվում, օգտակարությունը չի գիտակցվում:

Կառավարման, որակի ապահովման և այլ գործընթացներին արտաքին շահակիցների մասնակցությունը կանոնակարգված չէ: Հիմնական մոտեցումն անձնական կապերի միջոցով ոչ ֆորմալ հաղորդակցումն է, որը, սակայն, վտանգում է արտաքին աշխարհից տվյալների ստացման կայունությունը և հավաստիությունը: Գործընկերների տարածաշրջանային ցանցն, ըստ այդմ, ձևավորվել և ընդլայնվել է ոչ թե ըստ անհրաժեշտության կամ նպատակադրման, այլ ըստ հնարավորության: ԼՏՊՔ-ն ընդհանուր առմամբ պատշաճ ուշադրություն չի դարձնում իր զարգացմանը, ինչը ևս վկայում է ռազմավարական կառավարման թերացումների մասին: Այդուհանդերձ, քոլեջը ձգտում է իր ներդրումն ունենալ տարածաշրջանի զարգացման և բնակչության խնդիրների լուծման գործում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Գրեթե բոլոր շահակիցների կողմից միանման ընկալվող առաքելությունը
2) ՄԿԾ-ների կառուցվածքային համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին
3) Ուսանողների ընունելության և հավաքագրման հստակ մեխանիզմները, որոնք ապահովում են ուսանողների կայուն թիվ
4) Մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային ապահովվածությունը
5) Ֆինանսական կայունությունը
6) Տարածաշրջանի զարգացմանն ու բնակչության խնդիրների լուծմանը նպաստելու ձգտումը

Հաստատության թույլ կողմերն են.

1) Կառավարման մեջ ռազմավարական մոտեցումների անտեսումը
2) Որակի շրջափուլի սկզբունքով գործընթացներին վերաբերվելու մշակույթի գրեթե բացակայությունը
3) Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության ազատականացված մոտեցումը, որը վտանգում է վերջնարդյունքների ձևավորումը

4) Կրթական ծրագրերում փոփոխություններ կատարելու չհամակարգված, իրավիճակային մոտեցումը, այդ թվում՝ գործատուների մասնակցության մասով

5) Հետազոտական գործունեության արդյունքների կիրառելիությունն ու շարունակականությունը չապահովելը

6) Արտաքին կապերի հաստատման իրավիճակային բնույթը, այդ թվում՝ գործատուների հետ

7) ՈԱ գործընթացները և կարողությունների ձևավորումը չկարևորելը, վերլուծականության պակասը

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Մշակել և ներդնել նպատակների սահմանման և մշտադիտարկման այնպիսի մեխանիզմ, որը կերաշխավորի արտաքին և ներքին շահակիցների կարիքների արտացոլումը, ինչպես նաև կպարտադրի գնահատել ԼՏՊՔ առաջընթացն՝ ըստ սահմանված նպատակների

Կառավարումն ու վարչարարությունը

2) Ակտիվացնել ԼՏՊՔ խորհրդի գործունեությունը՝ որպես ռազմավարական խնդիրներ առաջադրող կոլեգիալ կառավարման մարմին

3) Հստակեցնել ԼՏՊՔ կառավարման օղակների և ստորաբաժանումների պարտականությունները և ապահովել դրանց համապատասխան կարողություններ՝ պարբերաբար իրականացնելով կառավարման համակարգի և ընթացակարգերի արդյունավետության գնահատումներ

4) Ներդնել տեղեկատվության կառավարման համակարգ՝ հատկապես ապահովելով դրա վերլուծական գործիքակազմը և իրականացնելով գործունեության միջավայրի, դրանից ստացվող տվյալների և հրապարակվող տեղեկությունների վերլուծություններ

Մասնագիտության կրթական ծրագրերը

5) Ներդնել ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման համակարգված մեխանիզմներ՝ ապահովելով ԼՏՊՔ-ի արտաքին շահակիցների առավել լայն ներգրավվածությունն այս գործընթացներում, իրականացնելով ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություններ, ինչպես նաև ծանոթացնելով ուսանողներին համապատասխան ՄԿԾ-ների հետ

6) Մշակել դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության հստակ քաղաքականություն, իրականացնել դասավանդման,

ուսումնառության և գնահատման մեթոդների պարբերական արդիականացում և համապատասխանեցում ուսումնառության ակնկալվող արդյունքների հետ՝ ապահովելով ուսանողակենտրոն ուսուցման մոտեցման արմատավորումը և ակադեմիական ազնվությունը

7) Ապահովել ՄԿԾ-ներով սահմանված և աշխատաշուկայում պահանջված գործնական հմտությունների ձևավորումը՝ կիրառելով նաև այդ հմտությունների կանոնավոր գնահատման գործիքակազմ

Ուսանողները

8) Մշակել ուսանողների մասնագիտական կողմնորոշման այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան ուսանողին լիարժեք պատկերացում կազմել՝ թե ինչ մասնագետ կդառնան նրանք քոլեջն ավարտելուց հետո

9) Նախաձեռնել ուսանողների կարիքների վերհանում՝ կանոնավոր գործադրելով համապատասխան մեխանիզմներ և երաշխավորելով կարիքներին համապատասխան լրացուցիչ խորհրդատվության տրամադրում

10) Իրականացնել շրջանավարտների զբաղվածության և հետագա կարիերայի խորքային վերլուծություններ և դրանց արդյունքների հիման վրա բարելավել ուսանողներին մատուցվող ծառայությունները

11) Զարգացնել ուսանողական ինքնակառավարվող մարմինների կարողությունները՝ նպաստելով ուսանողների իրավունքների հետևողական պաշտպանությանը

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

12) Հստակեցնել, ամրագրել և թափանցիկ դարձնել դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականությունը՝ հիմք ընդունելով սեփական կարիքների գնահատման արդյունքները

13) Բարելավելով դասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի կանոնավոր գնահատման ու կարիքների վերհանման համակարգը և բարձրացնելով դրա օբյեկտիվությունն ու հուսալիությունը՝ փոխկապակցել գնահատման արդյունքները վերապատրաստումների կամ մասնագիտական որակների բարձրացման այլ միջոցառումների, ինչպես նաև պարգևատրման համակարգի հետ

Հետազոտությունը և զարգացումը

14) Մշակել և սահմանել ԼՏՊՔ-ի հետազոտության ոլորտի հստակ սահմանված առաջնահերթությունները (քաղաքականությունը և ընթացակարգերը)՝ շեշտադրելով տարածաշրջանի կարիքները

15) Մշակել հետազոտական գործունեության շարունակականությունը, արդյունքների կիրառականությունը և միջազգայնացումը խթանող քաղաքականություն, գործատուներին մասնակից դարձնել ուսանողների հետազոտական նախագծերի թեմաների ընտրությանն ու իրականացմանը

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

16) Ռեսուրսների առավել նպատակային արդիականացում ապահովելու համար կանոնավոր կերպով գնահատել ռեսուրսների կիրառելիությունը, իսկ ուսումնական գործընթացում օգտագործվող գրադարանային ֆոնդը, ծրագրային փաթեթները և սարքավորումները արդիականացնելիս հաշվի առնել աշխատաշուկայի պահանջները

17) Հաշվի առնելով քոլեջի պետական և տարածաշրջանային լինելը՝ հնարավորինս հարմարեցնել ուսումնական միջավայրն ու պայմանները հատուկ կարիք ունեցող ուսանողների համար

Հասարակական պատասխանատվությունը

18) Ներդնել օգտագործած ռեսուրսների համար հասարակությանը հաշվետու լինելու կանոնակարգված գործընթաց՝ զուգահեռաբար ապահովելով ընթացակարգերի և ընթացիկ գործընթացների թափանցիկությունը և խթանելով հետադարձ կապը

Արտաքին կապերը և միջազգայնացումը

19) Գնահատել արտաքին կապերին և միջազգայնացմանն առնչվող սեփական կարիքները՝ ձևավորելով այն ակնկալիքների շրջանակը, որոնց պետք է ուղղված լինի արտաքին համագործակցությունը

20) Հստակեցնել արտաքին կապերին առնչվող գործառույթները՝ սահմանելով առանձին օղակների պարտականությունները և ապահովելով կանոնակարգված գործունեություն

21) Հաշվի առնելով ԼՏՊՔ տարածաշրջանային բնույթը և ռեսուրսների սղությունը՝ զարգացնել միջազգայնացման համար անհրաժեշտ այնպիսի ինստիտուցիոնալ և անհատական կարողություններ (այդ թվում՝ օտար լեզուների իմացության), որոնք կնպաստեն ԼՏՊՔ գործընկերների տարածաշրջանային ցանցի ընդլայնմանը և շրջանավարտների զբաղվածությանը

Որակի ներքին ապահովման համակարգը

22) Հատկացնելով նախատեսված ռեսուրսներ՝ ձևավորել ՈԱ այնպիսի ենթակառուցվածք, որը զերծ կլինի շահերի հնարավոր բախումներից և կապահովի վերլուծական, քննադատական և ինքնաքննադատական մոտեցում

23) Իրականացնելով ԼՏՊՔ կարիքների գնահատում՝ ներդնել ՈԱ այնպիսի քաղաքականություն և թիրախավորված ընթացակարգեր, որոնք կհամապատասխանեն ՈԱ ենթակառուցվածքի կարողություններին

24) Արտաքին և ներքին շահակիցներին մասնակից դարձնել ՈԱ գործընթացներին՝ նախատեսելով որակի գնահատման շոշափելի հետևանքներ և դրանով իսկ մոտիվացնելով շահակիցներին կարևորել ՈԱ գործընթացները

_____

Տիգրան Մնացականյան, փորձագիտական խմբի ղեկավար

Ամսաթիվ՝ 01 փետրվարի, 2021 թ,

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Տիգրան Մնացականյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, տնտեսագիտության թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Հեղինե Մուղումյան՝** Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի հեռահաղորդակցման համակարգերի աբիոնի վարիչ, դասախոս:
3. **Լիլիթ Ներսիսյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի դիզայնի ամբիոնի դասախոս:
4. **Նարեկ Հարությունյան՝** Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Ռոզա Բաբայանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության պարտավորագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ԼՏՊՔ-ն դիմել է ՈԱԱԿ՝ լրացնելով սահմանված ձևաչափի դիմում-հայտը և ներկայացնելով լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները, կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշում կայացնելուց հետո ՈԱԱԿ-ի, ԼՏՊՔ-ի և ԿԳՄՄՆ-ի միջև կնքվել է եռակողմ պայմանագիր: Կազմվել և հաստատվել է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Ինքնավերլուծություն

COVID 19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորած՝ ՄՈՒՀ-ը ժամանակացույցով նախատեսված ժամկետներից 2 շաբաթ ուշացումով, ըստ ՈԱԱԿ-ի

կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը հայերեն տարբերակով և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը:

Քանի որ ԼՏՊՔ-ն առաջին անգամ էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացով, և գործընթացն իրականացնելը քոլեջի համար բարդ էր, այդ պատճառով ՈԱԱԿ-ը որոշակի աշխատանքներ է իրականացրել ՄՈՒՀ-ի հետ՝ նախապատրաստելով նրան ինքնավերլուծության ներկայացման և հավատարմագրման գործընթացին: Հունիս ամսին ԼՏՊՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո ՄՈՒՀ-ն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: Աշխատակիցներն այդ ընթացքում ուղղորդվել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին 2020 թվականի հուլիսի 10-ին իրականացրել են մշտադիտարկում ԼՏՊՔ-ում:

ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 28.10.2020 թ.-ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է ՄՈՒՀ-ի 16 աշխատակիցների՝ դասախոսների, ուսումնաօժանդակ և ղեկավար կազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ ուսանողները, չեն մասնակցել: Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ հասկանալ և ճիշտ գնահատել քոլեջում տիրող իրական վիճակը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Այնուհետև համակարգողն ինքնավերլուծությունն ուղարկել է փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել է ԼՏՊՔ-ի հետ:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով՝

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,

3. ՄԿՈՒ ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,

4. նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը:

Նախնական գնահատման ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է առցանց դասալսումներ <<Հագուստի մոդելավորում և նախագծում>>, <<Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում>>, <<Մենեջմենթ>> և այլ մասնագիտությունների տարբեր կուրսերում:

Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը: Առաջնորդվելով ՈԱԱԿ-ի Փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, իսկ ռեսուրսների ուսումնասիրությունն իրականացվել է տեսաձայնագրության միջոցով:

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները, և կազմվել փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը, ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական առցանց այցի ընթացքում: Ուսումնական հաստատության կողմից ներկայացրած ցանկերից ընտրվել են դասախոսական և ուսանողական կազմերի ներկայացուցիչները, շրջանավարտները, գործատուները, որոնք պետք է մասնակցեին հանդիպումներին:

Նախանական այց

2020 թվականի նոյեմբերի 12-ին տեղի է ունեցել նախնական առցանց հանդիպում: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ համակարգողները, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը: Հանդիպման ընթացքում քոլեջին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցերի պլան-ժամանակցույցը, ներկայացվել է լրացուցիչ ուսումնասիրության փաստաթղթերի ցանկը և համավարակի պայմաններում առցանց փորձագիտական այցերի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները (քոլեջի կողմից տեսանյութերի տրամադրում,

որտեղ կերևա քոլեջի հիմնական ռեսուրսային բազան՝ լսարաններ, լաբորատորիաներ, գրադարաններ և այլն, քոլեջի կողմից փորձագետների կողմից պահանջված ուսումնասիրվող փաստաթղթերի առցանց տարբերակի ապահովում պատշաճ ժամկետներում, առցանց միջավայրում փարձագիտական այցերի տեխնիկական կանոնների ապահովում՝ տեսախցիկների միացված լինելը, մեկ ընդհանուր տեսախցիկի պարագայում ողջ սենյակը տեսնելու հնարավորությունը, սենյակում բացի թիրախային խմբերից այլ անձանց առկայության բացառումը և այլն):

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2020 թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը նախապես պլանավորված էր իրականացնել եռօրյա, սակայն առցանցի պարագայում եռօրյա փորձագիտական այցը դարձավ քառօրյա՝ պահպանելով փորձագետների նույն աշխատածավալը:

Ժամանակացույցի համաձայն՝ 29. 11. 2020 թ.-ին փորձագիտական այցի աշխատանքները մեկնարկել են փակ հանդիպմամբ, որի նպատակն էր քննարկել և համաձայնեցնել փորձագիտական գնահատման շրջանակը, առցանց այցի ընթացքում ուսումնասիրման ենթակա խնդիրները, ԼՏՊՔ-ի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, ֆոկուս խմբային հանդիպումների ընթացակարգը, հստակեցնել հետագա քայլերը:

Այցին մասնակցել է փորձագիտական խումբն ամբողջությամբ, ՈԱԱԿ-ի համակարգողը:

Փորձագիտական այցն սկսվել և ավարտվել է ԼՏՊՔ տնօրենի հետ հանդիպումներով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, բացառությամբ բաց հանդիպման: Ըստ սահմանված ժամանակացույցի փորձագիտական խումբը հանդիպումներ է իրականացրել քոլեջի բոլոր ստորաբաժանումներերի ներկայացուցիչների հետ:

Այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Փորձագիտական գնահատումը կատարվել է Հավատարմագրման պետական չափանիշների և չափորոշիչների և ՈԱԱԿ-ի ընթացակարգերի շրջանակներում, որով նախատեսվում է գնահատման երկաստիճան սանդղակ՝ **բավարար և անբավարար:**

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խումբը նախնական գնահատումն իրականացրել է քոլեջի ներկայացրած ինքնավերլուծության, դրան կից փաստաթղթերի ուսումնասիրության, քոլեջի կողմից ներկայացրած ռեսուրսների նկարահանման և փորձագիտական այցի դիտարկումների հիման վրա՝ պարբերաբար կազմակերպվող քննարկումների արդյունքում:

Քննարկումներից հետո դուրս բերված դիտարկումների հիման վրա խմբի ղեկավարը և ՈԱԱԿ-ի համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 24-ին:

Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ներկայացվել է ԼՏՊՔ դեկտեմբերի 25-ին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ԼՏՊՔ-ն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 14.01.2021 թ.-ին: ՈԱԱԿ-ը քոլեջի դիտարկումները տրամադրվել է փորձագետներին: 2021 թ. հունվարի 22-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է քոլեջի և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել է քոլեջի պատասխանը:

Հաշվի առնելով քոլեջի դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 29.01.2021 թ.-ին:

_____

Ռոզա Բաբայան, գործընթացի համակարգող

01 փետրվարի, 2021 թ,

Պատմություն. Լոռու տարածաշրջանային պետական քոլեջը հիմնադրվել է 1970 թ.-ին՝ սկզբնական շրջանում իբրև Երևանի առևտրատնտեսագիտական տեխնիկումի Կիրովականի մասնաճյուղ: 1971 թ.-ի ՀՍՍՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրի N200 հրամանով դարձել է Կիրովականի սովետական առևտրի տեխնիկում: 1987 թ.-ի հունվարի 21-ի ՀՍՍՀ մինիստրների խորհրդի N42 որոշմամբ տեխնիկումը վերակազմավորվեց՝ դառնալով Կիրովականի պետական տեխնոլոգիական տեխնիկում: ՀՀ Գերագույն խորհրդի 1992 թ.-ի հունիսի 25-ի որոշմամբ Կիրովական քաղաքը վերանվանվել է ք. Վանաձոր, որի կապակցությամբ Կիրովականի տեխնոլոգիական տեխնիկումը վերանվանվել է Վանաձորի տեխնոլոգիական տեխնիկումի: ՀՀ ԿԳ Նախարարի 09.09.2002 թ.-ի N241-Ն հրամանով տեխնոլոգիական տեխնիկումը վերանվանվել է «Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ի: Համաձայն ՀՀ կառավարության 03.03.2011 թ.-ի N199-Ն որոշման՝ «Վանաձորի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի:

Կրթություն. Քոլեջում գործում են միջին մասնագիտական 10 մասնագիտություններ՝

1. 0413.01.5 /0602/- Մենեջմենթ
2. 0414.01.5 /0607/- Շուկայաբանություն
3. 0415.01.5 /0608/ - Առևտուր
4. 0612.02.5 /2204/ - Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում
5. 0212.02.5 /2808/ - Հագուստի մոդելավորում և նախագծում
6. 0723.03.5 /2809/ - Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
7. 0728.03.5 /2814/ - Պոլիգրաֆիական արտադրություն
8. 0718.01.5 - Մեխատրոնիկա
9. 0413.06.5 - Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ
10. 015.01.5 - Զբոսաշրջություն

Բացառությամբ 0413.01.5/0602/ «Մենեջմենթ» մասնագիտության՝ մյուս մասնագիտություններով ուսուցումը քոլեջում կազմակերպվում է մոդուլային համակարգով: 0728.03.5 /2814/ «Պոլիգրաֆիական արտադրություն» և 0612.02.5 /2204/ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտությունների գծով ուսանողների ընդունելությունն սկսվել է 2011-2012 ուս. տարվանից: 2018-2019 ուս. տարվանից ընդունելություն է իրականացվել 0718.01.5 «Մեխատրոնիկա» մասնագիտությամբ: 2020-2021 ուս. տարում ընդունվել են 0413.06.5 - «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» առաջին դիմորդները:

Հետազոտություն / ստեղծագործ մտածելակերպ. ԼՏՊՔ-ի հետազոտության և զարգացման ռազմավարության նպատակն է մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում

նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը:

Արտաքին կապեր. ԼՊՏՔ-ի նպատակն է մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում նորարարությունների, ինչպես նաև տեղայնացված առաջավոր միջազգային փորձի ներդրումը, զարգացումն ու տարածումը, կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրումը և տեղայնացումը, կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը:

Որակի ապահովում. ԼՏՊՔ որակի ներքին ապահովման համակարգի հիմնական գործառույթներից է քոլեջի որակի ապահովման սահմանված ոլորտների շրջանակներում քանակական և որակական հետազոտությունների պարբերաբար իրականացումը, համապատասխան շահառուներին արդյունքները հասանելի դարձնելը՝ նպաստելով արդյունավետ որոշումների կայացմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Ըստ ինքնավերլուծության՝ Քոլեջի առաքելությունը սահմանում է հիմնադիր փաստաթուղթը՝ կանոնադրությունը, որը հաստատվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թ. դեկտեմբերի 2-ի N1140-Ա/2 հրամանով: Կանոնադրության 13-15-րդ կետերը, սակայն, սահմանում են ԼՏՊՔ գործունեության և նպատակների շրջանակը, որի հիման վրա կարելի է ձևավորել ԼՏՊՔ առաքելությունը. այդուհանդերձ, առաքելության հստակ ձևակերպում կանոնադրության մեջ չկա: Փոխարենը առաքելության ձևակերպում առկա է ԼՏՊՔ ռազմավարության մեջ, ըստ որի՝ քոլեջը պատրաստում է փոքր և միջին բիզնեսի մասնակիցներ՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի և տնտեսության ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ապահովում է սպասարկման ոլորտի աշխատողների և առանձին անհատների վերապատրաստումը լրացուցիչ կրթական ծրագրերի ու կարճաժամկետ դասընթացների միջոցով և այլն:

Ըստ ինքնավերլուծության՝ ԼՏՊՔ-ն կրթական համակարգի զարգացման ներուժ ունեցող լիարժեք կառույց է, որի հիմնական առաքելությունն է կրթական ծրագրերի միջոցով գիտելիքի ստեղծումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը, փոխանցումն ու տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Այն ապահովում է տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկությունների, ՏՏ ոլորտի, պոլիգրաֆիական արտադրության, առևտրական կազմակերպություններին, որակի ազգային շրջանակներին, պետական կրթական չափորոշիչներին և միջազգային չափանիշներին համապատասխան միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումը, ովքեր իրենց ստացած կրթությամբ կապահովեն բարեկեցիկ և արժանապատիվ ապագա: Այս ձևակերպումները, սակայն, որևէ հիմնարար փաստաթղթում ամրագրված չեն:

Այդպիսով՝ առաքելության միասնական ամրագրված ձևակերպում չկա, սակայն առաքելության բոլոր ձևակերպումներում հստակ է, որ ԼՏՊՔ գործունեության հիմնական ոլորտը ՈԱՇ 5-րդ մակարդակով նախատեսված կրթությունն է, որը պետք է սպասարկի տարածաշրջանի կարիքները: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ շահակիցները ևս կիսում են վերոնշյալ շրջանակը:

Քոլեջի նպատակները միևնույն ձևակերպումներով ամրագրված են կանոնադրության և 2017-2022 թթ. ռազմավարության մեջ. վերջինս հաստատվել է ԼՏՊՔ խորհրդի կողմից, որի կազմում կան ներքին և արտաքին շահակիցներ: Ռազմավարության մեջ նաև առկա է տեսլականի ձևակերպում: Տեսլականի և նպատակների ձևակերպումները, թեև ընդհանուր առմամբ մատնանշում են ԼՏՊՔ զարգացման որոշ ուղղություններ, չափելի չեն և չեն ենթադրում ժամկետներ:

Պետք է փաստել, որ ներքին և արտաքին շահակիցների կարիքներին առնչվող դրույթներ ԼՏՊՔ կանոնադրության և ռազմավարության ձևակերպումներում առկա են, սակայն առկա չեն դրանց վերաբերյալ քննարկումների մասին փաստեր:

ԼՏՊՔ-ում առկա են հաշվետվություններ ու գործունեության գնահատման որոշ այլ մեխանիզմներ, սակայն դրանք թիրախավորած չեն ռազմավարական նպատակներին:

Որպես թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղի՝ ԼՏՊՔ-ն դիտարկում է «2023-28 թթ. ռազմավարության համահնչության ապահովումը մարզի ռազմավարությանը և գործատուների պահանջարկներին»:

Դատողություններ

ԼՏՊՔ առաքելությունը, թեև չունենալով հստակ ամրագրված ձևակերպում, միևնույն կերպ է ընկալվում ԼՏՊՔ շահակիցների կողմից, ինչը նշանակում է, որ առաքելությունն ըստ էության ձևավորված է: Այն համահունչ է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, քանի որ առաքելության բոլոր տարբերակներում շեշտվում է միջին մասնագիտական կրթության ոլորտը, և որևէ տարբերակում նախատեսված չէ դրանից դուրս որևէ գործունեություն:

ԼՊՏՔ տեսլականը և նպատակները, որոնք ներառված են ռազմավարության մեջ, թեև հաստատվել են ԼՏՊՔ խորհրդի կողմից, սակայն խորհրդի անդամները նպատակների ձևավորման վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ ռազմավարության նպատակները վերցված են կանոնադրությունից: Այդպիսով՝ խորհրդի կազմում ընդգրկված ներքին և արտաքին շահակիցներն անմիջական մասնակից չեն եղել նպատակների ձևավորմանը, սակայն կարևորագույն շահակիցներից մեկը՝ ԼՏՊՔ հիմնադիրը, կանոնադրության միջոցով, այսինքն՝ հիմնադրման իսկ պահից, նախասահմանել է ԼՏՊՔ նպատակները: Այդպիսով՝ կարելի է փաստել, որ առաքելությունն ու նպատակները փաստացի արտացոլում են շահակիցների կարիքները, սակայն առկա չեն մեխանիզմներ, որոնք կերաշխավորեին, որ նպատակների հաջորդ վերանայման ընթացքում շահակիցների կարիքները հաշվի կառնվեն:

Բացի այդ՝ տեսլականի և նպատակների ձևակերպումները չեն կարող ծառայել՝ որպես գործունեության հիմք, քանի որ դրանք չափելի չեն և չեն ենթադրում ժամկետներ: Այն, որ ռազմավարությունը նախատեսված է 2017-2022 թթ. համար, որևէ կերպ չի երևում: Ձևակերպված և գործադրվող նպատակների միջև առկա որոշակի խզման մասին է վկայում նաև այն, որ ԼՏՊՔ-ն պլանավորում է իր հաջորդ ռազմավարությունը համահունչ դարձնել մարզի ռազմավարությանը և գործատուների պահանջներին. փաստորեն գիտակցելով, որ 2017-2022 թթ. ռազմավարությունում կա նման խնդիր, ԼՏՊՔ-ն չի պատրաստվում դա շտկել մինչև 2022 թ.-ը:

Թեև առկա են գործունեության արդյունքների գնահատման մեխանիզմներ, սահմանված նպատակների հետ դրանց ուղիղ կապի բացակայությունը թույլ չի տալիս ԼՊՏՔ-ին գնահատել իր առաջընթացն՝ ըստ այդ նպատակների:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ԼՏՊՔ-ն ունի թեև ոչ լիարժեք ձևակերպված, սակայն գրեթե բոլոր շահակիցների կողմից միանման ընկալվող առաքելություն, որը տարածաշրջանի կարիքներն սպասարկելու նպատակով միջին մասնագիտական կրթության տրամադրումն է՝ փորձագիտական խումբը կարծում է, որ ԼՏՊՔ ծավալած գործունեությունը համապատասխանում է որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Եզրակացություն

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է բավարար:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ԼՏՊՔ-ն պետական ոչ առևտրային կազմակերպություն է և ունի օրենսդրությամբ նախատեսված կառավարման մարմիններ՝ խորհուրդ և տնօրեն: Կանոնադրությամբ սահմանված են հիմնադրի և լիազորված մարմնի լիազորությունները, ինչպես նաև խորհրդի ձևավորման և տնօրենի ընտրության կարգերը և լիազորությունները:

Կառավարման բարձրագույն մարմինը խորհուրդն է, որը առնվազն երեք ամիսը մեկ անգամ նիստ է գումարում: Կոլեգիալ կառավարման մարմիններից է նաև ուսումնամեթոդական խորհուրդը, որը գործում է ուսումնական, ուսումնադաստիարակչական, մեթոդական աշխատանքների և այլ հարցերի կոլեգիալ քննարկումն ապահովելու համար:

ԼՏՊՔ խորհրդի կազմում ընդգրկված են գործատուներ, զբաղվածության տարածքային ծառայության ներկայացուցիչ, ուսանողներ, դասախոսներ: Խորհրդի նիստերին, սակայն, ուսանողները հարցեր գրեթե չեն բարձրացնում: Ընդհանրապես խորհրդում քննարկվող հարցերի շրջանակը չի կրում ռազմավարական բնույթ, ուղղված չէ քոլեջի երկարաժամկետ զարգացմանը. դրանք ավելի շատ օպերատիվ կառավարման այն հարցերն են, որոնց ընդունման համար պարտադիր է խորհրդի որոշում կայացնելը (օրինակ՝ ուսման վարձի զեղչումը, պարգևատրման հարցերը, տեխնիկական միջոցների և ռեսուրսների

ձեռքբերումը):[1] Միաժամանակ փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ խորհրդի անդամներն ունեն կարիքներ և առաջարկություններ, այդ թվում՝ ռազմավարական բնույթի, որոնք խորհրդի նիստերին երբեք չեն առաջադրել:

Այդուհանդերձ, ԼՏՊՔ-ում հիմնականում չեն տեսնում ինքնավարության զարգացման կարիք:

ԼՏՊՔ կազմակերպական կառուցվածքն իր վերջին փոփոխություններով հաստատվել է խորհրդի 19.02.2020 թ. որոշմամբ:

ԼՏՊՔ ստորաբաժանումներն ունեն տարեկան պլաններ և ներկայացնում են համապատասխան հաշվետվություններ, սակայն դրանք ընդհանուր պլանավորման մաս չեն կազմում: Այսինքն՝ առկա են միայն կարճաժամկետ ծրագրեր, որոնք ուղղված են ընթացիկ գործունեությանը: Ավելին՝ ստորաբաժանումների գործունեության մեջ ռազմավարական ծրագրի ընդունմամբ որևէ բան չի փոխվել:

Կառավարման համակարգում հստակ տարանջատված չեն առանձին օղակների գործառույթները. աշխատանքներն ավելի շատ իրականացվում են ըստ կարողությունների, այլ ոչ ըստ պարտականությունների:

Իր գործունեության վրա ազդող գործոնների համակարգված ուսումնասիրություններ ԼՏՊՔ-ն չի իրականացնում: Փոխարենը, սակայն, որոշումների կայացման հիմքում հաճախ ոչ ֆորմալ մեխանիզմներով ստացված տվյալներն են: ԼՏՊՔ-ում արտաքին միջավայրի արձագանքի ցուցիչներ են համարում դիմորդների թիվը:

Քաղաքականության և ընթացակարգերի կանոնավոր գնահատման և բարելավման մեխանիզմներ չկան, իսկ փաստացի փոփոխություններ հազվադեպ են տեղի ունենում: Փոփոխությունների հիմքում հիմնականում իրավիճակային ստացված տեղեկություններն են, որոնց հուսալիությունը չի ստուգվում:

Տեղեկությունների հավաքագրումն ընդհանրապես կանոնավոր բնույթ չի կրում, չկան համապատասխան ընթացակարգեր: Ըստ այդմ՝ ներդրված չեն նաև ստացվող տեղեկությունների գնահատման մեխանիզմներ: Հավաքագրված տեղեկությունները հիմնականում չեն մշակվում և վերլուծվում:

ԼՏՊՔ-ն հարցումներ են իրականացվում առաջին կուրսի ուսանողների շրջանում՝ պարզելու, թե նրանք ինչպես են տեղեկացել քոլեջի մասին: Սակայն հարցման արդյունքները չեն օգտագործվում: Բացի այդ՝ փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ շրջանավարտների մի մասը ԼՏՊՔ դիմելիս ոչ ճիշտ պատկերացում է ունեցել սպասվելիք որակավորման մասին: Ընդհանուր առմամբ հրապարակվող տեղեկությունները որոշվում են կամայական կերպով:

[1] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում:

Դատողություններ

Թեև ԼՏՊՔ կանոնադրությամբ սահմանված են միանձնյա և կոլեգիալ կառավարման մարմիններ, կառավարման բարձրագույն մարմին հանդիսացող խորհուրդը լիարժեք չի մասնակցում ԼՏՊՔ կառավարմանը: Ռազմավարական խնդիրներ առաջադրելու համար նախատեսված միակ մարմինը՝ ԼՏՊՔ խորհուրդը, այդպիսի գործառույթ իրականացնելու հարցում կարծես հետևողական չէ: Հստակ ձևակերպված և չափելի նպատակների բացակայության պայմաններում կառավարման համակարգի ռեսուրսները կենտրոնացած են ընթացիկ ամենօրյա աշխատանքների վրա:

Արդյունքում՝ խորհրդի կազմում շահակիցների ընդգրկումը չի ծառայում իր նպատակին, քանի որ խորհրդի նիստերին ընդհանուր առմամբ չեն ընդունվում նրանց վրա անմիջապես ազդող որոշումներ:

Նկատելի չէ ԼՏՊՔ-ում ռազմավարական կառավարում իրականացնելու ցանկությունը, քանի որ չկա նաև ինքնավարության ավելացման ձգտում:

Միայն օպերատիվ կառավարման վրա կենտրոնացման պայմաններում անտեսվում է արտաքին միջավայրի ազդեցության ուսումնասիրությունը, քանի որ ընթացիկ աշխատանքների վրա այն կարող է տեսանելի չլինել: Այն որ ԼՏՊՔ-ն ավելի շատ ուսումնասիրում է արտաքին միջավայրի արձագանքը, թույլ չի տալիս կանխատեսել և նախապես արձագանքել փոփոխություններին: Իսկ ոչ ֆորմալ մեխանիզմներով տվյալների ստացումը վտանգում է այդ տվյալների հուսալիությունը հատկապես այն պարագայում, որ ԼՏՊՔ-ում չկա տեղեկատվության կառավարման համակարգ իր վերլուծական գործիքակազմով:

ԼՏՊՔ կառավարման համակարգում ակնառու է կառուցվածքի և մարդկային ռեսուրսների անհամապատասխանության խնդիրը: Վերջինիս արդյունքում աշխատանքներն ավելի շատ իրականացվում են ըստ կարողությունների, այլ ոչ ըստ պարտականությունների:

Ինչպես կառավարման համակարգի, այնպես էլ ընթացակարգերի կանոնավոր գնահատման և բարելավման մեխանիզմներ չկան: Կարելի է եզրակացնել, որ կառավարման գործընթացներին որակի շրջափուլի սկզբունքով վերաբերվելու մշակույթ դեռևս ձևավորված չէ:

Եզրահանգում

Հաշվի առնելով ԼՏՊՔ կառավարման մեջ ռազմավարական մոտեցումն անտեսելը, կոլեգիալ մարմինների ոչ լիարժեք գործունեությունը, կառավարման համակարգում պարտականությունների ոչ հստակ տարանջատումը, տեղեկատվության կառավարման համակարգի և որակի շրջափուլի սկզբունքով գործընթացներին վերաբերվելու մշակույթի գրեթե բացակայությունը, պլանավորման և մշտադիտարկման մեխանիզմների անկատարությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ կառավարման համակարգը,

վարչական կառույցները և դրանց գործունեությունը բավարար արդյունավետ չեն կարող համարվել:

Եզրակացություն

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Լոռու տարածաշրջանային պետական քոլեջն իրականացնում է 10 մասնագիտական կրթական ծրագիր, որոնք համապատասխանում են հաստատված պետական կրթական չափորոշիչներին:

Ուսումնասիրված ՄԿԾ-ների ուսումնական պլաններում դասաժամերի բաշխվածությունը ևս համապատասխանում է պետական կրթական չափորոշիչներին: Ուսումնական պլաններից երևում է, որ մոդուլների մուտքային պահանջները հիմնականում պահպանվում են: Նախատեսված են նաև խորհրդատվության ժամեր, սակայն դասախոսների և ուսանողների հանդիպումից պարզ դարձավ, որ խորհրդատվության ժամերը քոլեջում հստակ չեն սահմանվում և իրականացվում:

Բացի այդ՝ առցանց այցի ընթացքում պարզվեց, որ շրջանավարտների և գործատուների հավաստմամբ ՄԿԾ-ներում առկա է գործնական հմտությունների ձևավորմանն ուղղված բաղադրիչների պակաս, իսկ տեսական ուսուցումը հիմնված է մասամբ հնացած նյութերի վրա: Ավելին՝ ծրագիրն ավելի շատ տեսականի հիմքն է, իսկ գործնականն ապահովվում է՝ ըստ իրավիճակի և ըստ կարողությունների, այսինքն՝ գործնական մասը պլանավորված չէ հիմնականում:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում նաև պարզվեց, որ ուսանողները չեն ծանոթացվում ՄԿԾ-ներին և չգիտեն, թե ինչ վերջնարդյունքներ են նախատեսված: Հարկ է նշել, որ առանձին ծրագրերում նախատեսված կրեդիտները ձևական բնույթ ունեն և չեն պլանավորվում ու վերահսկվում:

Առանձին մասնագիտությունների (ինչպես օրինակ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում») համար մշակված են

մասնագիտության բնութագրեր, որոնցում նկարագրված են համապատասխան մասնագիտության դերը, խնդիրների բնագավառները, կատարման չափանիշները, աշխատանքային գործընթացը, գիտելիքը, կարողություններն ու հմտությունները, սակայն դասավանդման մեթոդների ընտրության սահմանված քաղաքականություն դեռ չկա։ Դասընթացների և վերջնարդյունքների քարտեզագրումը կամ փոխադարձ համապատասխանություն ու դասընթացների նպատակայնություն ապահովող մեխանիզմը գրեթե բացակայում է, ինչը ևս դժվարեցնում է մեթոդների ընտրությունը։[2]

Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ ամեն առարկայի դասախոս մեթոդների ընտրությունը կատարում է ազատ և ինքնուրույն, ինչի արդյունքում դասապրոցեսն ստացվում է խիստ դասախոսակենտրոն։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ նաև, որ ուսուցումն իրականացվում է ավելի շատ դասախոսություններով, ինչը ևս խոչընդոտում է ուսանողակենտրոն ուսուցմանը։ Բացի այդ՝ ուսանողները դասընթացներ չեն ընտրում։ Դասախոսների հետ զրույցից նաև պարզ դարձավ, որ մեթոդների ընտրության ժամանակ դասախոսները հաճախ հաշվի չեն առնում ո՛չ վերջնարդյունքների տեսակը, ո՛չ էլ ՈԱՇ մակարդակը։

Քոլեջում առկա են գնահատման համակարգի որոշ տարրեր, մասնավորապես՝ գնահատման կարգ, սակայն գնահատման չափանիշներ սահմանված չեն։ Առանձին դասընթացների ծրագրերում նշված են պահանջներ, որոնք հիմնականում կրկնում են պետական կրթական չափորոշիչների պահանջները։ Ուսանողը, սակայն, չգիտի գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը միտված առաջադրանքների գնահատումն ինչ սկզբունքով է իրականանում։ Կուրսային աշխատանքների կատարման և պրակտիկայի կազմակերպման կարգերը գնահատման վերաբերյալ դրույթներ չեն սահմանում։ Քոլեջում չի գործում սահմանված ընթացակարգով բողոքարկում։ Ուսանողների հետ հանդիպումից պարզ դարձավ որ կան գնահատականների բողոքարկման դեպքեր, սակայն արձանագրում տեղի չի ունենում։

Առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ առցանց ուսուցման պայմաններում եղել են որոշակի խնդիրներ, մասնավորապես՝ հագուստի նախագծման մոդուլի շրջանակում, երբ խմբային աշխատանքի փոխարեն ստիպված են եղել անհատական աշխատանքներ կատարել, իսկ աշխատանքի իրական չափսերը փոխարինել մասշտաբային չափերով։ Բացի դա՝ թեև վերջնական գնահատումը կատարվել է քոլեջում, դժվարացել է ուսանողի աշխատանքի ընթացքի գնահատումը։[3]

Առցանց ուսուցման պայմաններում չի օգտագործվել դասավանդման մեկ միասնական համակարգ։ Դասախոսները ազատ են եղել դասավանդման առցնաց հարթակի և մեթոդների ընտրության հարցում։ Դասապրոցեսն իրականացվել է VIBER և ZOOM հավելվածների միջոցով։ Դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ կիրառվող հարթակների միջոցով դասապրոցեսի իրականացումը այդքան էլ արդյունավետ չէ. հիմնականում կիրառվում է հարց ու պատասխանի մեթոդը, որը իրականացվում է գրելու

[2] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում։
[3] Փոփոխվել է քոլեջի դիտարկումների արդյունքում։

միջոցով: Տվյալ մեթոդներով դասավանդման արդյունքում անհնարին է դառնում ապահովել ակադեմիական ազնվությունը և կիրառել գնահատման ճշգրիտ համակարգ:

Քոլեջում առկա է ակադեմիական ազնվության և գրագողության կանխարգելման կարգ, սակայն այն չի գործում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիպլոմային և կուրսային աշխատանքների՝ ակադեմիական ազնվության տեսանկյունից ստուգում չի իրականացվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 0212.02.5 մասնագիտության դիպլոմային նախագծման կազմման ժամանակ անհրաժեշտ է մշակման տեխնոլոգիական հաջորդականություն, որը բացակայում է մոդուլների կատարման չափանիշներում: Դիպլոմային նախագծման աշխատանքներում ներկայացված են դետալները, սակայն վերջնական հագուստի կարված պատրաստի տեսքը բացակայում է, նախագծման դիպլոմային էսքիզների շարքը կատարված է մեկ ձեռագրով, որը ուսանողի կողմից արված չէ: Ինչպես նաև 0612. 02. 5 մասնագիտության «Web ծրագրավորման և ձևավորման հիմունքներ» մոդուլից ներկայացված web կայքը ուսանողների կողմից պատրաստված կայք չէր և վերցրված էր համացանցից:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ դասախոսներն ընդհանուր առմամբ ազատ են նաև գնահատման մեթոդների ընտրության հարցում: Գործնական հմտությունների գնահատում, սակայն, ոչ միշտ է իրականացվում: Բացի այդ՝ դասալսումների արդյունքում պարզ դարձավ, որ ուսանողներին տրամադրվող ընթացիկ հետադարձ կապը չի նպաստում նրանց առաջընթացին: Փորձառության արդյունքում գնահատումը ևս իրականացվում է վերոնշյալ տրամաբանությամբ:

ԼՏՊՔ-ն չունի բենչմարքինգի իրականացման հստակ մշակված քաղաքականություն և չի կատարել մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն: Շարժունությունը խթանող մեխանիզմ քոլեջում առկա չէ, սակայն քոլեջի՝ գերազանց և բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները կարողանում են կրթությունը շարունակել բուհում՝ ընդունվելով բուհի երկրորդ կուրս հեռակա ուսուցմամբ: Նմանատիպ այլ ծրագրերին համահունչ լինելուն է նպաստում այն, որ ծրագրերը հիմնված են պետական կրթական չափորոշիչների վրա: Ներդրված չեն նաև քոլեջի ներսում փորձի կանոնակարգված փոխանակման մեխանիզմներ:

Քոլեջն ունի «Մասնագիտության կրթական ծրագրի մշակման և մշտադիտարկման կարգ»: Կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման համար հիմք են հանդիսանում ամփոփիչ ատեստավորման արդյունքները և ՊՈՀ-ի նախագահի կարծիքները: ԼՏՊՔ-ի կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման հիմնական մեխանիզմը հարցումներն են, որոնց անցկացման շրջանակը թույլ չի տալիս, որ հարցումները համարվեն ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման արդյունավետ եղանակ: Քոլեջի աշխատակիցներն իրենք էլ են հավաստում, որ այդ հարցումները ավելի շատ սուբյեկտիվ բնույթ են կրում, քան օբյեկտիվ:

ՄԿԾ-ների մշտադիտարկումը հիմնականում իրականացվում է բաժինների վարիչների կողմից: Հաշվի առնելով ուսուցման մոդուլային բնույթը, հաճախ առաջանում է

դասընթացների զուգահեռության ապահովման լրացուցիչ վերահսկողության անհրաժեշտություն:

ՄԿԾ-ներում փոփոխություններ հազվադեպ են կատարվում. ՄԿՈՒԶԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում փոփոխության է ենթարկվել գործնականի և տեսականի համամասնությունը, ինչպես նաև վերացվել են որոշ կրկնվող թեմաներ: Կատարվել են նաև փոփոխություններ գործատուների առաջարկությունների հիման վրա, սակայն այդ գործընթացը կանոնակարգված չէ: Առցանց այցի ընթացքում պարզվեց, որ առանձին դեպքերում ծրագրային փոփոխությունները պայմանավորված են դասախոսի փոփոխությամբ:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջի մասնագիտության կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին: Վերջին տարիներին ներդրվել են նոր կրթական ծրագրեր: Մասնագիտական կրթական ծրագրերում սահմանված են ուսումնառության ակնկալվող արդյունքները, որոնք համապատասխանում են ՈԱՇ-ին: Գործատուների հետ հանդիպումը փաստեց, որ իրենք ընդհանուր առմամբ գոհ են քոլեջի շրջանավարտների գիտելիքներից, սակայն նկատում են դրանց արդիականացման անհրաժեշտություն, ինչպես նաև անհրաժեշտ է ուսումնական ծրագրերը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին և հետևել նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը՝ ավելի շատ աշխատելով գործնական հմտությունների ապահովման ուղղությամբ:

Ինչպես դասավանդման և ուսումնառության, այնպես էլ գնահատման մեթոդների ընտրության հարցում դասախոսների ազատությունը տվյալ դեպքում չի նպաստում կրթական ծրագրերի լիարժեք իրականացմանը, քանի որ գործնական հմտություններին ուղղված մեթոդներ քիչ են կիրառվում, և փաստացի ուսուցումը մեծապես ուղղվում է գիտելիքների ձևավորմանը: Նման իրավիճակում հնարավոր չէ երաշխավորել փաստացի իրականացվող ուսումնական գործընթացի արդյունքների համապատասխանությունը կրթական ծրագրերով նախատեսված վերջնարդյունքներին: Ավելին՝ գնահատման համակարգի անկատարությունը թույլ չի տալիս լիարժեք գնահատել այդ փաստացի արդյունքները:

Ընդհանուր առմամբ քոլեջը չունի շարժունությանը նպաստող մեխանիզմներ, չի իրականացնում բենչմարքինգ: Կանոնավոր չեն նաև աշխատաշուկայի պահանջների հետ համադրումները: Այս ամենի արդյունքում կրթական ծրագրերում փոփոխությունները համակարգված բնույթ չեն կրում՝ հիմնված լինելով իրավիճակային և ոչ միշտ հուսալի տվյալների վրա:

Եզրահանգում

Հաշվի առնելով մեթոդների ընտրության ազատականացված մոտեցումը, որը չի երաշխավորում վերջնարդյունքների ձևավորումը, շրջանավարտների գործնական հմտությունների նկատված պակասը, ուսանողակենտրոն ուսուցման տարրերի սակավությունը, գործատուների չկանոնակարգված մասնակցությունը ՄԿԾ-ների մշակման ու վերանայման գործընթացում, ծրագրերի բարելավման չհամակարգված մոտեցումը՝ փորձագիտական խումբը կարծում է, որ կրթական ծրագրերը և դրանց իրականացումը չեն բավարարում չափանիշի պահանջներին:

Եզրակացություն

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Ըստ ինքնավերլուծության՝ առկա ուսուցման ընդունելությունն իրականացվում է տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկին համապատասխան: Ըստ «Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի»՝ առկա ուսուցման համակարգում քոլեջը կազմակերպում է ընդունելության քննություն միայն «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությամբ: Ընդունելության ընթացակարգը թափանցիկ է և բաց: «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության դիմորդների համար քոլեջն անվճար կազմակերպում է նախապատրաստական պարապմունքներ «Գծանկար» առարկայից, որն անցկացնում են քոլեջի համապատասխան մասնագետները:

Ուսումնառողների թիվը 2015-2020 թթ. կայուն է՝ 340-360 ուսումնառող: Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում ըստ փաստաթղթերի առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ: ԼՏՊՔ-ն համագործակցում է Լոռու մարզի դպրոցների հետ: Քոլեջի կողմից տպագրվում են բուկլետներ, պատրաստվում են տեսաուղերձներ, սակայն առցնաց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները մեծամասամբ քոլեջ ընդունվում են ծանոթների միջնորդությամբ՝ երբեմն տեղյակ չլինելով, թե ինչ մասնագետ են դառնալու (անտեղյակ լինելը հիմնականում վերաբերվում է «Հաշվողական տեխնիկա» մասնագիտությանը):

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում կարևորվում է կրթական կարիքների վերհանման գործընթացը: Ուսանողներն ընդգրկված են քոլեջի խորհրդի, թոշակավորող և ուսանողական նպաստ նշանակող հանձնաժողովների կազմում: Ուսանողների կրթական կարիքների վերհանման գործընթացում ներգրավված են նաև կուրսղեկները: Ուսանողները տարբեր հարցերով դիմում են իրենց կուրսղեկին, ով հարցը քննարկում է ուսումնական մասի հետ և անհրաժեշտության դեպքում նաև տնօրենի: Առաջարկություններով հանդես է գալիս նաև ուսանողական խորհուրդը, որը տարբեր հարցեր է բարձրացնում ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին կամ տնօրենին, սակայն առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողական խորհրդին ուսանողները դիմում են միայն կազմակերպչական հարցերով: Քոլեջում իրականացվում են հարցումներ ուսանողների կրթական կարիքների վերաբերյալ, ունեցել են բողոքների, առաջարկությունների արկղ: Առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները խնդիրների դեպքում հիմնականում դիմում են կուրսղեկներին:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ որ ԼՏՊՔ-ում առկա չէ խորհրդատվություն տրամադրելու համար հստակ ժամանակացույց: Լրացուցիչ պարապմունքների ու խորհրդատվությունների տրամադրման գործընթացը համակարգված չէ, իսկ խորհրդատվության տրամադրման գործընթացը դասախոսի հայեցողությամբ է իրականացվում:

Ըստ ԼՏՊՔ ինքնավերլուծության՝ հիմնականում բոլոր ուսանողները տեղեկացված են իրենց վերաբերող վարչական ծառայությունների մասին, քանի որ տարբեր խնդիրներով առնչվում են վարչական աշխատակազմին: Բոլոր կանոնակարգերն ու ընթացակարգերն ուսումնառողներին հասանելի են տարբեր աղբյուրներից՝ կուրսղեկներից, մասնագիտական բաժնի վարիչից, գործավարից, հայտարարությունների տախտակից: Ինչպես և նշվում է ինքնավերլուծությունում, այնպես էլ առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ներքին կարգապահական կանոններով չկան նախատեսված վարչակազմի ընդունելության օրեր և ժամեր. ուսանողները կարող են դիմել վարչական անձնակազմին ցանկացած ժամանակ և ցանկացած հարցով, գրավոր կամ բանավոր, ինչպես նաև կուրսղեկի միջոցով: Տվյալ գործընթացը, սակայն, համակարգված բնույթ չի կրում: Առկա է «Ուսանողների բողոքների քննարկման կարգ», սակայն այդ կարգը վերջին 5 տարիների ընթացքում երբևէ չի գործադրվել:

Ըստ ինքնավերլուծության՝ 2012 թ.-ին քոլեջում ստեղծվել է Կարիերայի կենտրոն ստորաբաժանումը, որի աշխատանքները կանոնակարգում էր ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: 2018 թ.-ից քոլեջն ունի հաստիքային աշխատող: Կառույցը գործում է համապատասխան իր կանոնադրության: Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվում են միջոցառումներ շրջանավարտների հետ, հավաքագրվում են նրանց մասին տվյալներ, ինչպես նաև առկա է համագործակցություն զբաղվածության տարածքային կենտրոնի հետ: Շրջանավարտների հետ կապը, սակայն, հիմնականում ապահովվում է գործընկեր գործատուների միջոցով:

Թեև, ըստ ինքնավերլուծության, նախքան ավարտելն աշխատանքի անցածներ չկան, ուսումնական և արտադրական պրակտիկաները նպաստում են ուսանողների կարիերային:

Հաճախ ուսանողները աշխատանքի են հրավիրվում հենց պրակտիկայի անցկացման կազմակերպության կողմից: Օրինակ՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում» և «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտությունների շրջանավարտների զգալի մասն աշխատում է «Գլորիա» կարի արտադրական ձեռնարկությունում: Սակայն առցանց այցի ընթացքում պարզվեց, որ առանձին դեպքերում ուսանողներին չեն բավարարում նրանց առաջարկվող փորձառության վայրերի տարբերակները, և ուսանողներն ստիպված են լինում անձնական կապերով առաջադրել այլ տարբերակ:

Շատ հաճախ քոլեջ են դիմում անհատ ձեռնարկատերեր աշխատող գտնելու խնդրանքով: Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հետ ներդրվել է դուալ կրթության համակարգ «Մեխատրոնիկա» մասնագիտությամբ, սակայն շրջանավարտներ դեռևս չկան: Ըստ ԼՏՊՔ տվյալների՝ աշխատանք փնտրող շրջանավարտների թիվը մեծ չէ, սակայն փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ շրջանավարտների զգալի մասը հետագայում փոխել է մասնագիտությունը:

Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավվածության առումով առանձնանում են «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության ուսանողները, որոնք մասնագիտության ծրագրով նախատեսված կատարում են դիպլոմային աշխատանք: Այս նույն մասնագիտության ուսանողները մասնակցում են քոլեջի և քաղաքային մշակութային միջոցառումներին՝ ներկայացնելով իրենց նախագծերը հագուստի հավաքածուների տեսքով: Մյուս մասնագիտությունների գծով ուսանողներն իրականացնում են կուրսային աշխատանքներ, սակայն առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ կուրսային աշխատանքները հիմնականում ռեֆերատիվ բնույթ են կրում: Ուսանողները մասնակցում են կոնֆերանսների, դասախոսների աջակցմամբ տպագրվում են հոդվածներ ուսանողների մասնակցությամբ: «Հաշվողական տեխնիկա» մասնագիտության ուսանողները նախագծել են սմարթ ջերմոցներ ծրագիր: Սակայն գործընթացները շարունակական բնույթ չեն կրում: Բացի այդ՝ ԼՏՊՔ-ն մասնակցում է մարզի մակարդակով ուսանողական գիտական ընկերության ստեղծման քննարկումներին:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ուսանողների ներկայացուցչական, անկախ, ինքնակառավարվող ընտրովի մարմին է և գործում է իր կանոնադրությանը համապատասխան: Սակայն առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողական խորհուրդն իր գործունեությունը սահմանափակում է միջոցառումների կազմակերպմամբ: Ըստ ինքնավերլուծության՝ առկա է ուսանողական խորհրդի ֆինանսավորում, սակայն առցանց այցի ընթացքում պարզվեց, որ ֆինանսավորումն իրականացվում է միայն ըստ առանձին միջոցառումների. ուսանողական խորհուրդը ֆինանսավորման հետ կապված հարցերի դեպքում դիմում է տնօրենին: Ուսանողական խորհուրդը չի դիտարկվում ուսանողների կողմից որպես ուսանողների իրավունքների պաշտպանության համար համապատասխան մարմին: Խնդիրների դեպքում ուսանողները անմիջապես դիմում են վարչական մարմնին: Եղել են գնահատականների բողոքարկման հարցով ուսանողական խորհրդին դիմելու եզակի դեպքեր, սակայն այդ դեպքերում գնահատականները չեն վերանայվել:

Ուսանողների շրջանում իրականացվում են դասախոսների գնահատմանն առնչվող հարցումներ, որոնք, ըստ քոլեջի, ունեն սուբյեկտիվ բնույթ: Ծառայությունների գնահատման այլ մեխանիզմներ չեն կիրառվում:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն ընդհանուր առմամբ գործադրում է ջանքեր ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործընթացների արդյունքները բարելավելու համար: Սակայն կա խնդիր ուսանողների մասնագիտական կողմնորոշման հետ կապված. հաճախ նրանք տեղյակ չեն, թե ինչ մասնագետ են դառնալու: Սա կարող է վտանգել ուսանողների կարիերային ու առաջընթացին:

Դրական է գնահատվում նաև այն, որ քոլեջում առկա են կրթական կարիքների արտահայտման հնարավորություններ, սակայն քոլեջն իր կողմից ուսանողների կրթական կարիքների վերհանում չի նախաձեռնում: Կա խնդիր խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների անցկացման գործընթացների հետ կապված. սահմանված չի հստակ ժամանակացույց, ինչպես նաև առկա է հետադարձ կապի խնդիր: Խարհրդատվական և լրացուցիչ ծառայությունների համակարգումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը և ուսանողի շարունակական առաջընթացին:

Քոլեջում սահմանված չէ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակացույց: Սակայն գործընթացը հիմնականում արդյունավետ է ստացվում. ուսանողներն ստանում են իրենց անհրաժեշտ ուղղորդումն ու օժանդակությունը:

Քոլեջում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, սակայն դրանց արդյունավետությունը կայուն չէ: Չեն իրականացվում աշխատաշուկայի և շրջանավարտների զբաղվածության վերլուծություններ՝ սահմանափակվելով միայն մակերեսային տվյալների հավաքագրմամբ: Նմանատիպ վերլուծությունները կնպաստեն քոլեջ-գործատու կապի կայունացմանն ու շարունակական զարգացմանը: Ուսանողների կարիերային նպաստող բաղադրիչ կարող է համարվել նաև ստեղծագործ մտքի առկայությունը: Անհրաժեշտ է, որպեսզի բարելավվեն դասախոսների կողմից տրվող առաջադրանքները, որոնք կնպաստեն ուսանողների մոտ ստեղծագործ մտքի և վերլուծական կարողությունների զարգացմանը:

Թեև ԼՏՊՔ-ում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմինն, ըստ ինքնավերլուծության, ուսանողական խորհուրդն է, քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին որպես այդպիսին չի գործում:

Ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման սակավ մեխանիզմները չեն կարևորվում քոլեջի կողմից, ինչը վտանգում է այդ ծառայությունների հնարավոր շարունակական բարելավումը:

Եզրահանգում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քոլեջում առկա են ուսանողների ընունելության և հավաքագրման հստակ մեխանիզմներ, ուսանողներն ունեն իրենց կարիքներն արտահայտելու հնարավորություններ, քոլեջը փորձում է նպաստել շրջանավարտների կարիերային՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ի գործունեությունը բավարարում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է բավարար:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Դասախոսական կազմի հետ աշխատանքային հարաբերությունները հաստատվում են պայմանագրային հիմունքներով: ԼՏՊՔ-ում գործում է հիմնական, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու ընթացակարգ: Պաշտոնների անձնագրերում նկարագրված են նաև յուրաքանչյուր պաշտոնին ներկայացվող պահանջները, որտեղ ամփոփված են հիմնական գործառույթները, որոնք բխում են տվյալ պաշտոնից: Ընդունելությունից առաջ առաջնահերթ հաշվի է առնվում դասախոսի որակավորումը: Հայտարարությունները տարածում են հեռուսատատեսության, թերթի, կայքէջի և զբաղվածության կենտրոնի միջոցով: ԼՏՊՔ-ի դասախոսական կազմը ձևավորվում է մրցութային կամ ոչ մրցութային կարգով: Մրցույթն անցկացնելու նպատակով ԼՏՊՔ տնօրենի համապատասխան հրամանի հիման վրա ստեղծվում է հանձնաժողով: Հանձնաժողովը մրցույթն անցկացնելուց հետո կազմում է արձանագրություն:

Նկատելի է ՄԿԾ-ների իրականացման համար պրակտիկ ոլորտի դասախոսների ներգրավվածության ձգտում քոլեջի կողմից, որոնք ունեն համապատասխան

մասնագիտական որակավորումներ: Թեև նման պահանջ ամրագրված չէ, սակայն ներկայումս հենց պրակտիկ փորձ ունենալն է համարվում դասախոսների հավաքագրման հիմնական պահանջը. նախկինում դա բարձրագույն կրթություն ունենալն էր:

ՄՈՒՀ-ում յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմ ընտրելիս հաշվի են առնվում մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները. առաջնային են համարվում բազային մասնագիտական կրթությունը, աշխատանքային փորձը և այլ տեղեկություններ, որոնց հավաստող փաստաթղթերը ներկայացվում են անձնակազմի հաշվառման-կադրերի բաժին և մրցութային հանձնաժողովներին: Հաշվի են առնվում ուսումնական, գիտական, մանկավարժական և հասարակական գործունեության ցուցանիշները:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ մրցույթով համալրում իրականացվում է վերջին տարիներին, իսկ մինչ այդ աշխատանքի անցածները շարունակում են աշխատել և ավելի մեծ թիվ են կազմում: Բացի այդ՝ մասնագետներին աշխատանքի հրավիրելու հարցում քոլեջը սահմանափակված է իր ֆինանսական ռեսուրսներով. խնդիրն ավելի զգալի է՝ հաշվի առնելով մարզում աշխատել ցանկացողների սակավությունը: Պարզվեց նաև, որ դասախոսներից շատերն աշխատում են ԼՏՊՔ-ում այն պատճառով, որ նախկինում իրենց հարազատներն են աշխատել քոլեջում:

Տարվա ընթացքում իրականացվում են դասալսումներ: Կատարվում է դասախոսների փորձի փոխանակում, նախօրոք մշակված դասալսման թերթիկում նշվում են թերությունները, կատարվում են առաջարկություններ: Դասալսումների հիման վրա դասախոսը նաև կատարում է ծրագրային որոշակի փոփոխություններ (հիմնականում՝ ներթեմայական):

ԼՏՊՔ-ում կարևորվում է դասախոսական կազմի մասնագիտական որակների և նրանց աշխատանքի պարբերական գնահատումը՝ պարբերաբար իրականացնելով հարցումներ: Գնահատման արդյունքում ցածր գնահատականներ ստացած դասախոսների հետ կազմակերպում են անհատական զրույցներ, փորձում են հասկանալ առկա խնդիրները և գտնել լուծումներ: Խնդիրները քննարկվում են նաև ամբիոնի նիստերում: Հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ յուրաքանչյուր ուսումնական տարի հարցումներին մանակցում են միայն լավ սովորող ուսանողները՝ սովորողների մոտավորապես 40%-ը: Դասախոսների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունքները քննարկվում են բաժնի վարիչների կողմից և եթե հայտնբերվում են որոշակի թերություններ, բաժնի վարիչը անհատական զրույց է ունենում տվյալ դասախոսի հետ, քննարկում խնդրի առաջացման պատճառները և փորձում վերացնել դրանք: Դասախոսի աշխատանքը նաև ամփոփվում է մատյանի վերջին էջում, որտեղ նշում են թերացումները և թերությունները:

Դասսախոսական կազմի խրախուսման մեխանիզմներ որպես այդպիսին առկա չեն: Դասախոսներն ստանում են նախատոնական խրախուսումներ, սակայն կատարած աշխատանքի համար խրախուսման մեխանիզմներ առկա չեն:

ԼՏՊՔ-ն մոդուլային ուսուցման ներդրմամբ դասավանդող դասախոսները վերապատրաստվել են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից: ԼՏՊՔ-ի աջակցությամբ վերջին

վերապատրաստումն իրականացվել է 2012 թ.-ին: 3 դասախոսներ մասնակցել են «GIZ» կազմակերպության կողմից անցկացրած «Հեռավար դասավանդման կարողություններ» թեմայով դասընթացներին, ինչի արդյունքում երեքն էլ ստացել են ազգային էլեկտրոնային ուսուցման փորձագետի որակավորում: Վերջին 4 տարվա վերապատրաստում անցած մասնագետների թիվը 2017 թ.-ին կազմել է՝ 6, 2018 թ.՝ 2, 2019 թ.՝ 14, 2020 թ.՝ 11 հոգի: Դիտարկելով վերջին 3 տարվա վերապատրաստումների տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ ավելի մեծ թվով երիտասարդ մասնագետներ են վերապատրաստվել և մասնակցել տարբեր դասընթացների: Վերապատրաստումները եղել են և մասնագիտական և ոչ մասնագիտական:

Սակայն հանդիպումից պարզ դարձավ, որ քոլեջի կողմից կարիքների բացահայտում չի իրականացվում, վերապատրաստումներն իրականացվում են անհատական նախաձեռնության կամ կարճաժամկետ ծրագրերի արդյունքում: Կարիքների վերհանման հիման վրա իրականացվող համակարգված մեթոդական և մասնագիտական վերապատրաստումների իրականացումը բացակայում է:

Բացի այդ՝ առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերապատրաստումների անհրաժեշտություն տեսնում են ինչպես գործատուները և ուսանողները, այնպես էլ հենց դասախոսները: Գործատուները կարծում են, որ դասախոսներին ցանկալի է վերապատրաստել նոր տեխնոլոգիաների ուղղությամբ, իսկ ուսանողներն ու դասախոսներն առավել շեշտադրում են դասավանդման մեթոդների ուղղությամբ վերապատրաստման և միջազգային փորձի ձեռքբերման անհրաժեշտությունը:

Ինչպես երևում է փաստաթղթերի ուսումնասիրությունից, հիմնական դասախոսական կազմը 3 տարիների կտրվածքով համեմատաբար կայուն է, և նկատվում է դասախոսական կազմի երիտասարդացման միտում: Քոլեջում կան համատեղությամբ աշխատողներ, բայց հիմնական աշխատողները ավելի շատ են (80 և ավելի տոկոս) և հոսունության մակարդակը ցածր է: Գործատու դասախոսներ ներգրավված են հիմնականում «Մեխատրոնիկա» դուալ ծրագրում:

ԼՏՊՔ բաժինների վարիչները մշտական աշխատանք են տանում սկսնակ դասավանդողների հետ: Փորձի ձեռքբերման նպատակով սկսնակ դասախոսները դասալսումներ են իրակնացնում փորձառու դասախոսների մոտ: Բաժինների նիստերի ժամանակ քննարկում են դասավանդման հետ կապված բազմաթիվ հարցեր, ինչը նպաստում է սկսնակ դասավանդողների արագ ինտեգրմանը դասավանդման պրոցեսին:

ԼՏՊՔ-ում առկա է ուսումնաօժանդակ, վարչական կազմ, սակայն աշխատակիցները տեսնում են մարդկային ռեսուրսի պակաս: Վարչական և դասախոսական կազմի մեթոդական և մասնագիտական որակների, կարողությունների կատարելագործվելու հնարավորությունները գրեթե բացակայում են:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով: Քոլեջում գործում են հիմնական, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունելու ընթացակարգեր: Նաև նկատելի է որ, ՄԿԾ-ների իրականացման համար պրակտիկ ոլորտի դասախսների ներգրավվածության ձգտում կա: Պրակտիկ դասախոսների ներգարվումը կնպաստի աշխատաշուկայի կարիքներին արձագանքմանը և պրակտիկ հմտություններով մասնագետների պատրաստմանը, ինչպես նաև կնպաստի քոլեջի դասախոսների հետ փորձի փոխանակմանը:

Ֆինանսական ապահովվածության ներկայիս վիճակը ԼՏՊՔ կողմից համարվում է դասախոսական կազմով ապահովվածությունը սահմանափակող գործոն: Այսինքն՝ թեև հոսունությունը ցածր է, սակայն դասախոսական կազմի առումով ԼՏՊՔ հավակնություններն ավելին են, քան առկա ռեսուրսները:

Քոլեջը փորձում է իրականացնել դասախոսների մասնագիտական որակների, նրանց աշխատանքի գնահատում և կարիքները վերհանում: Գնահատման արդյունքում ցածր գնահատականներ ստացած դասախոսների հետ կազմակերպում են անհատական զրույցներ: Սակայն փրձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ որ ընթացակարգը կա, սակայն չկա մշակված քաղաքականություն, որով տվյալ ընթացակարգերը հնարավոր կլիներ ծառայեցնել բարելավմանը: Կարիքների վերհանումը չի փոխկապակցվում վերապատրաստումների հետ: Վերջիններիս կարիքը տեսանելի է թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցների համար:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական կարողությունները համապատասխանում են կրթական ծրագրերով շնորհվող որակավորումներին, և քելեջը ուշադրություն է դարձնում աշխատակազմի ուսումնական, մանկավարժական և հասարակական գործունեության ցուցանիշներին, կատարվում են գնահատումներ և վեր են հանվում խնդիրներ, որոշ չափով իրականացվում են վերապատրաստումներ, առկա է ուսումնական գործընթացում գործատուների ներգրավման ձգտում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատվում է բավարար:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

ԼՏՊՔ-ի հետազոտական հետաքրքրությունների շրջանակը ըստ քոլեջի առանձնահատկությունների սահմանված չէ և ըստ այդմ հիմնականում նույնացվում է քոլեջի հիմնական մասնագիտությունների ոլորտների հետ: Հավակնությունները ևս սահմանված չեն և վերջին հաշվով սահմանափակվում են կրթական ծրագրերի վերջնարդյունքներով ենթադրվող ստեղծագործական բաղադրիչով:

Քոլեջում բացակայում է հետազոտական ոլորտում նպատակներին հասնելու առանձնացված փաստաթուղթ, որտեղ շարադրված կլինեն կոնկրետ գործողությունները և պահանջվող ռեսուրսները:

ԼՏՊՔ-ում հետազոտական աշխատանքներն իրականացվում են ստեղծագործական պրակտիկաների, հագուստի հավաքածուի պատրաստման և ցուցադրման, կուրսային և ավարտական դիպլոմային նախագծի կատարման ու պաշտպանության, ռեֆերատների, կարճաժամկետ դասընթացների արդյունքում ստացված արտադրանքի (օրինակ սմարթ ջերմոց, ռոբոտ-մանիպուլյատոր, անտիռադար), կոնֆերանսներին ու սեմինարներին ներկայացվող աշխատանքների ձևով: Կազմակերպվել են բաց կոնֆերանսներ և ուսանողական գիտաժողովներ, որտեղ ներկայացվել են «Մասնագիտական որոշ առարկաների համակարգչային ուսուցման հետազոտում և տեղայնացում», «Հայկական խաղ-սիմուլյատորների անհրաժեշտությունը ուսուցման մեջ», «Արհեստական ինտելեկտը Web ծրագրավորման մեջ», «Տնտեսության պարբերաշրջանային զարգացումը և տնտեսական ճգնաժամեր» թեմաներով աշխատանքները: Փորձագիտական առցանց այցի ընթացքում, սակայն, պարզ դարձավ, որ վերոնշյալ աշխատանքներին գործատուները գրեթե չեն մասնակցում: Բացի այդ՝ հետազոտական բաղադրիչ ունեցող նախագծերի կամ միջոցառումների արդյունքները չեն օգտագործվում հաջորդ հետազոտական նախագծերում:

Պետք է նշել նաև, որ հետազոտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունը երաշխավորելու և գրագողությունը կանխելու նպատակով միջոցառումներ չեն իրականացնում:

Քոլեջը ոչ միայն չի կարևորում իրենց ստեղծած արդյունքի միջազգայնացումը, այլև չի կարևորում դրսի փորձի ներմուծումը քոլեջ: Այն, որ քոլեջում հետազոտական գործունեության միջազգայնացում չի իրականացվում, պայմանավորված է նաև օտար լեզվի տիրապետման ոչ բավարար մակարդակով: Սակայն քոլեջը նախատեսում է մասնակցել Բրիտանական խորհրդի Grafting Futures ծրագրի շրջանակում Փլիմութի արվեստի քոլեջի համար Art Managment մոդուլի ստեղծման գործընթացին:

Ընդհանուր առմամբ հետազոտության և կրթական գործընթացի փոխկապակցման գործընթացները, որոնք, համաձայն ինքնավերլուծության, սահմանափակվում են

դիպլոմային աշխատանքների կատարմամբ, հնարավոր չէ որակել իբրև կայուն մեխանիզմներ, չնայած որ մոդուլային ուսուցումը դիտարկվում է որպես դրական կողմ:

Դատողություններ

Քոլեջում դեռևս ձևավորված չէ հետազոտության և զարգացման հայեցակարգը, ինչը թույլ չի տալիս նույնիսկ սահմանել նպատակներ: Արդյունքում՝ հետազոտական գործունեությունը նույնացվում է կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող գործունեության հետ, որը գրեթե բոլոր դեպքերում պարտադիր գործունեություն է: Նման մոտեցման պայմաններում դասախոսները մասնակցում են գործընթացներին միայն պասիվ դիտորդի, գնահատողի կամ խորհրդատուի դերում: Հետազոտական աշխատանքներ են իրականացնում դիպլոմային նախագծերի, ռեֆերատների տեսքով, մասնակցում են գիտաժողովների:

Դիպլոմային և այլ աշխատանքներին գործատուների մասնակցության ցածր աստիճանը չի նպաստում, որ իրականացվեն առավել պահանջված և կիրառելի հետազոտություններ: Բացի այդ՝ քոլեջը չի օգտագործում ուսանողների աշխատանքների արդյունքները զարգացնելու հնարավորությունը, քանի որ չի դիտարկում արդեն իրականացված նախագծերը որպես իրականացվելիք նախագծերի հիմք:

Կատարված աշխատանքների արդյունքների արժևորմանը չի նպաստում այն հանգամանքը, որ ԼՏՊՔ-ում չեն իրականացվում ակադեմիական ազնվության և գրագողության հետ կապված միջոցառումներ: Չի իրականացվում նաև հետազոտական գործունության միջազգայնացում:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ԼՏՊՔ-ն չունի հետազոտական ոլորտում իր հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող և դրանց ուղղված գործունեություն ենթադրող քաղաքականություն և ընթացակարգեր, չի ապահովում հետազոտական գործունեության արդյունքների կիրառելիությունը, միջազգայնացումն ու շարունակականությունը, գործատուները ներգրավված չեն ուսանողների մոտ հետազոտական, ստեղծագործ միտք զարգացող հմտությունների ձևավորմանը, դասախոսները չեն ուսումնասիրում միջազգային լավագույն փորձ՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ԼՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Կրթական գործընթացը ԼՏՊՔ-ն իրականացնում է երկու մասնաշենքում: Շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 4485,3 քառ. մ մակերես: Ռեսուրսային բազայի դիտարկման արդյունքում փորձագիտական խումբն արձանագրել է, որ քոլեջում առկա է երեք համակարգչային լաբորատորիա, երկու կարի արհեստանոց, մեկ տպարան-արհեստանոց, գրադարան-ընթերցարան, գրապահոց, միջոցառումների դահլիճ, մարզադահլիճ և լսարաններ: Սակայն քոլեջը բավարար չի համարում իր շենքային պայմանները, քանի որ որպես դասասենյակ է օգտագործվում նաև գրադարանը, արվեստանոցը, կարի մեկ արհեստանոց, համակարգչային մեկ լաբորատորիան:

ԼՏՊՔ-ի գրադարանը ունի մեկ գրապահոց և մեկ գրադարան-ընթերցասրահ: Ընթերցասրահը կարող է սպասարկել միաժամանակ 20 ընթերցողի: Գրադարանը տարեցտարի համալրվում է մասնագիտական ամսագրերով, բրոշյուրներով, թերթերով: Առացնաց այցի ընթացքում պարզ դարձավ, որ գրադարանում առկա չէ ժամանակակից մասնագիտական գրականություն՝ ըստ ոլորտների: Ուսանողների հետ հանդիպման ընթացքում նրանց մեծամասնությունը հավաստեց գրադարանում մասնագիտական գրականության համալրման անհրաժեշտությունը: Նրանք նշեցին, որ մասնագիտական գրականությունը հիմնականում ռուսերեն լեզվով է: Բացի այդ՝ առցանց այցի ընթացքում պարզվեց, որ անհրաժեշտության դեպքում, եթե առկա է գրադարանում բացակայող գրականության կարիք, գրադարանավարի կամ տնօրենի անձնական կապերի շնորհիվ է միայն հնարավոր դառնում ապահովել պահանջվող գրականությունը:

Քոլեջում առկա կարի երկու արհեստանոցները համալրված են ունիվերսալ և մասնագիտական կարի մեքենաներով: Քոլեջում առկա է տպարան, որտեղ տեղադրված է բազմացնող և տպագրական այլ առաջավոր տեխնիկաներ: Սպորտդահլիճը հագեցած է ժամանակակից մարզագույքով:

Քոլեջի ֆինանսավորման հիմնական աղբյուրները երկուսն են՝ պետական բյուջեն և ուսման վարձավճարները, սակայն վերջիններից ձևավորվող միջոցները շատ քիչ են:

ԼՏՊՔ-ում ֆինանսական հոսքերի կառավարումն ու վերահսկումն իրականացնելու նպատակով կազմվում է բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվ: Ֆինանսական միջոցների գերակշիռ մասը պետական բյուջեից մուտքերն են: Քոլեջի ծախսերի հիմնական մասը կազմում է աշխատանքի վարձատրությունը: Ֆինանսները չեն բավարարում լրացուցիչ ռեսուրսներ ձեռք բերելու համար, սակայն կարիքից ելնելով երբեմն կարողանում են ձեռք բերել նյութական ռեսուրսներ:

ՄԿԾ-ի նպատակները իրականացնելու համար քոլեջի բյուջեն ընդհանուր առմամբ կայուն է: Ամեն տարի քոլեջը եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում քոլեջի կառավարման խորհրդին:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզվեց, որ ներքին շահակիցների գրեթե բոլոր խմբերի համար քոլեջի առաջնային կարիքը կապված է հենց նյութական և ֆինանսական ռեսուրսների հետ:

ԼՏՊՔ-ում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացների քաղաքականություն, որպես այդպիսին չկա: Ներքին փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է թղթային տարբերակով, էլեկտրոնային փոստով և ներքին հեռախոսակապի միջոցով: Սակայն տեղեկատվությունը չի կառավարվում, քանի որ այն գտնվում է տարբեր աղբյուրների մոտ և կանոնակարգված չէ: Դա վկայում է նաև այն, որ հավատարմագրման գործընթացին ներկայացրած փաստաթղթերի մեծ մասը ստորագրված և կնքված չեն:

Տեղեկատվության տարածման նպատակով քոլեջում գործում է պաշտոնական կայք և ֆեյսբուքյան էջ: Քոլեջն ունի պաշտոնական կայք էջ, այդուհանդերձ առկա տեղեկատվությունը ամբողջական չէ:

Անվտանգության ապահովմամբ հիմնականում զբաղվում են 3 գիշերային հերթապահները և տնտեսվարը. այս առումով քոլեջում խնդիրներ չեն առաջացել: Ինքնավերլուծությունում նշված է, որ քոլեջում աշխատում է բուժքույր:

Դասախոսների առողջության պահպանման, դժբախտ պատահարներից ստացած վնասվածքների համար իրականացվում է բժշկական ապահովագրություն յուրաքանչյուր տարի 15000 դրամի չափով:

Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջն ունի հաշմանդամ ուսանողներ, որոնք չունեն հատուկ խնամքի կարիք, և այդ պատճառով հատուկ խնամք պահանջող անձանց համար պայմաններ ապահովելու անհրաժեշտություն դեռևս չի առաջացել:

Հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը ռեսուրսներ է տրամադրել թե՛ դասախոսներին և թե՛ ուսանողներին հեռավար ուսուցումը պատշաճ իրականացնելու նպատակով: Դասախոսները դասից դուրս անհրաժեշտության դեպքում կարող են օգտվել լաբորատորիաներից: Ինտերակտիվ ցուցադրություններ կազմակերպելու համար ռեսուրսներ են տրամադրվում և՛ ուսանողներին, և՛ դասախոսներին: Սակայն քոլեջի կողմից չի իրականացվում գործընթացի գնահատում:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը իր ռազմավարական նպատակների և կրթական ծրագրերի իրականացման համար ջանքեր է գործադրում ռեսուրսներ ձեռք բերելու համար: Թեև քոլեջի ֆինանսական միջոցները սահմանափակ են,

այնուամենայնիվ քոլեջը փորձում է հատկացնել ֆինանսական միջոցներ իր ռեսուրսների բարելավման համար։ Ռեսուրսային բազայի համալրումն իրականացվում է ծրագրերի միջոցով (օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի կողմից ֆինանսավորմամբ)։ Քոլեջի գրադարանը, սակայն, կարիք ունի մասնագիտական նորագույն գրականության ձեռքբերման՝ աշխատաշուկայի պահանջներին համահունչ։

Քոլեջի ֆինանսական միջոցների կայունությունը վտանգված չէ, քանի որ այն հիմնականում ֆինանսավորվում է պետության կողմից։ Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ռեսուրսային բազան հիմնականում բավարարում է ՄԿԾ-ների իրականացման համար։ Սակայն առանձին ռեսուրսների մասով, ըստ արտաքին և ներքին շահակիցների, ցանկալի է իրականացնել տարբեր քանակական և որակական բարեփոխումներ, ինչը վկայում է ռեսուրսների հասանելիության և կիրառելիության գնահատման թերացումների մասին։

Թեև փաստաթղթաշրջանառությունը դեռևս հիմնականում իրականացվում է թղթային տարբերակով, որը երբեմն հանգեցնում է որոշակի խնդիրների, հետագայում առավել արդյունավետ գործունեություն իրականացնելուն կարող է նպաստել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ստեղծումը։

Դրական է, որ քոլեջն ունի անվտանգ և ապահով միջավայր՝ առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով։ Սակայն քոլեջը քայլեր չի ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ՝ համարելով, որ դրա անհրաժեշտությունը չկա։

Չիրականացնելով առկա ռեսուրսների կիրառելիության գնահատումներ՝ ԼՏՊՔ-ն վտանգում է իր հետագա ծախսերի արդյունավետությունը, ինչը հատկապես կարևոր է միջոցների սղության պայմաններում։

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ սահմանափակ ֆինանսական միջոցների պայմաններում քոլեջը ստեղծել է բավարար պայմաններ մասնագիտական կրթություն իրականացնելու համար, ռեսուրսային բազան հիմնականում բավարարում է ՄԿԾ-ների իրականացմանը, փաստաթղթաշրջանառության գործընթացները թեև չկանոնակարգված, բայց իրականացվում են, քոլեջի միջավայրի ապահովության, անվտանգության պահպանման և առողջությանն ուղված ծառայությունները բավարար են՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին։

Եզրակացություն

ԼՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատվում է բավարար։

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ԼՏՊՔ ներքին հաշվետվողականության արդյունքը տնօրենի տարեկան հաշվետվությունն է, որը ներկայացվում է խորհրդին: Խորհրդի կազմում ընդգրկված են արտաքին շահակիցներ, ինչը թույլ է տալիս ներքին հաշվետվողականությունը մասամբ փոխակերպել արտաքին հաշվետվողականության: Հաշվետվությունները, սակայն, հիմնված չեն ցուցիչների վրա և մասամբ են վերլուծական:

Արտաքին հաշվետվողականությունն ընդհանուր առմամբ ուղղված է ԿԳՄՄՆ, իսկ հասարակությանը թիրախավորող գործընթացները կանոնակարգված չեն:

Արտաքին շահակիցների առջև հաշվետվողկանությունն ապահովվում է սոցիալական ցանցերի միջոցով, մասնավորապես՝ facebook-յան էջում ներկայացնելով տեղեկություններ կատարած աշխատանքների՝ տարբեր ցուցադրությունների, քոլեջի ներսում կամ քոլեջից դուրս անցկացված միջոցառումների, հրավիրված հյուրերի մասին: Առցանց հարթակը կապի ձևավորման մեխանիզմ է, որի միջոցով պարբերաբար պատասխանում են կայքէջի, էլ. փոստի հարցերին: Սակայն տվյալ կապերի մեխանիզմների կայունության երաշխիքներ առկա չեն, քոլեջը դրանք չի խթանում: Ինֆորմացիան ամբողջական չէ և ոչ հաճախ է թարմացվում. ընթացակարգերի միայն չնչին մասն է առցանց հասանելի: Գործընթացների թափանցիկությունն ավելի շատ ապահովվում է անձնական շփումների մակարդակով:

ԼՏՊՔ-ն մասնակցում է ՋՏԿ-ի կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառին, առևտրաարդյունաբերական պալատի կողմից կազմակերպված ցուցահանդես-վաճառքին, պարբերաբար կազմակերպում է հագուստի մոդելների ցուցադրություն, անցկացվում են սեմինար-դասընթացներ: Իրականացվում է լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում՝ տարբեր կառույցների հետ համագործակցության միջոցով, օրինակ՝ ՋՏԿ-ի, և տարբեր բարեգործական կազմակերպությունների հետ կազմակերպելով կարճաժամկետ դասընթացներ: Օրինակ, «Եվրասիա» բարեգործական հասարակական կազմակերպությունը 2019 թ.-ին իրականացրել է «Հաշմանդամությունը որպես մարտահրավեր» ծրագիրը, որին մասնակցել է հաշմանդամություն ունեցող 15 կին և մրցութային կարգով ընտրված երկու դասախոս: Ծրագրի արդյունքում մասնակիցները կարճ ժամանակում աշխատանք են գտել Վանաձորում գործող կարի արտադրամասերում, իսկ մեկ մասնակից՝ հենց քոլեջում:

ԼՏՊՔ-ն ձգտում է ծառայել իր համայնքին նաև այն առումով, որ առաջարկվող մասնագիտությունների ցանկում մի կողմից ներառում է տարածաշրջանի համար ավանդական համարվող՝ թեթև արդյունաբերության ոլորտի մասնագիտություններ, մյուս կողմից՝ առավել ժամանակակից (զբոսաշրջության, SS և այլ որորտների) մասնագիտություններ: Նշված ուղղությունների մի մասով քոլեջն առաջարկում է

կարճաժամկետ դասընթացներ, սակայն դա արվում է ոչ հստակ պարբերականությամբ և ոչ հաճախ:

Դատողություններ

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ԼՏՊՔ-ն հաշվետու է պետությանը, ինչպես նաև ձգտում է դառնալ տարածաշրջանային համայնքի լիարժեք անդամ՝ մասնակցելով զանազան միջոցառումների:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը հնարավորինս ակտիվություն է փորձում ցուցաբերել առցանց հարթակներում, փորձելով տեղեկատվություն տարածել տվյալ հարթակների միջոցով, այնուամենայնիվ անհրաժեշտություն է նկատվում գործընթացներն առավել թափանցիկ դարձնելու նպատակով առավել շատ տեղակատվություն վերբեռնել տվյալ հարթակներում, որը կնպաստի արտաքին շահակիցների ներգրավմանը քոլեջի աշխատանքներում:

Հետադարձ կապի մեխանիզմները հիմնականում սահմանափակված են նվազագույն հասանելիությամբ, ինչը չի խթանում հետադարձ կապը:

Թեև դա չի ապահովում հասարակությանը գիտելիքի փոխանցման կայունություն, քոլեջն իրականացնում է լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում տարբեր կառույցների հետ համագործակցության միջոցով՝ կազմակերպելով կարճաժամկետ դասընթացներ: Այնուամենայնիվ, հասարակությանը հաշվետու լինելու կանոնակարգված գործընթացներ չեն իրականացվում, այդ թվում՝ չի խթանվում հետադարձ կապը:

Եզրահանգում

Հաշվի առնելով, որ ԼՏՊՔ-ն իրականացնում է հաշվետվողականության գործընթաց սահմանված կարգին համապատխան, ձգտում է նպաստել տարածաշրջանի զարգացմանն ու բնակչության խնդիրների լուծմանը, գործարկում է հասարակությանը գիտելիքի փոխանցման որոշ միջոցներ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն

ԼՏՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8- ի պահանջներին գնահատվում է բավարար:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Ըստ ռազմավարության՝ ԼՏՊՔ նպատակներից է կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրումը և տեղայնացումը, կրթության գլոբալ համակարգերին ինտեգրումը: ԼՏՊՔ-ն փորձում է բարձրացնել շարժունության ծրագրերի մասին իրազեկվածության աստիճանն ուսանողների և դասախոսների շրջանում, սակայն այդ աշխատանքները հիմնականում սահմանափակվում են տեղեկությունների տարածմամբ և չեն ուղղորդվում աջակցությամբ:

Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու առանձին ենթակառուցվածք ԼՏՊՔ-ն չունի: Արտաքին կապերին առնչվող աշխատանքները կատարում են տնօրենը, նրա տեղակալը և կարիերայի կենտրոնի պատասխանատուն: Արտաքին կապերը կանոնակարգող և համապատասխան գործառույթները հստակեցնող փաստաթուղթ ևս մշակված չէ:

ԼՏՊՔ արտաքին կապերի հիմնական տիրույթն ուսանողների փորձառությունն է. կնքվել են մի շարք պայմանագրեր տարբեր ձեռնարկությունների (հիմնականում՝ Վանաձոր քաղաքում գործող ընկերությունների) հետ: Սակայն գործատուների հետ կապերի հաստատումը հիմնականում անձնական կապերի վրա է հիմնված: Բացի փորձառությունից՝ այլ տիրույթներում գործատուների հետ կանոնավոր համագործակցում չի իրականացվում: Բացառություն են կազմում քոլեջի խորհրդում ներկայացված երկու գործատուները և զբաղվածության տարածքային կենտրոնը, որոնց հետ համագործակցումն ավելի ակտիվ, սակայն հիմնականում տեղեկատվական բնույթի է:

Առկա է նաև համագործակցություն տարածաշրջանի գրադարանների հետ, սակայն եթե նախկինում այդ համագործակցությունը եղել է պայմանագրային հիմքով, ապա ներկայումս այլ գրադարանների ռեսուրսները հասանելի են միայն անձնական կապերի միջոցով:

Տեղական և միջազգային ոչ առևտրային կազմակերպությունների հետ առանձին համագործակցությունների արդյունքում ԼՏՊՔ-ն ստացել է նյութական ոչ ֆինանսական աջակցություն, մասնավորապես՝ կահավորում և սարքավորումներ: Սակայն այդ գործընկերության նախաձեռնությունը հիմնականում եկել է դրսից:

Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները համարում են, որ ուսանողների օտար լեզվի (առաջին հերթին՝ անգլերենի և ռուսերենի) իմացության մակարդակը բավարար չէ, ինչը խոչընդոտել է ոչ միայն շարժունությանը, այլև օտարերկրյա կազմակերպությունների հետ աշխատանքային հարաբերությունների հաստատմանը:

Դատողություններ

Չնայած արտաքին կապերի և միջազգայնացման զարգացում ենթադրող նախասահմանված նպատակին՝ ԼՏՊՔ-ն այս ուղղությանը ռեսուրս գրեթե չի հատկացնում: Ներքին շահակիցներին աջակցությունը հիմնականում տեղեկատվական է, ինչը չի կարող համարվել արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն:

Արտաքին կապերի խիստ ապակենտրոնացված և մեծապես անձնական կապերի վրա հիմնված համակարգը թույլ չի տալիս իրականացնել կանոնավոր գործընթացներ: Արտաքին կապերի հաստատման նախաձեռնողականության առումով ԼՏՊՔ-ն պասիվ է: Նախաձեռնողականությանը վնասում է նաև այն, որ սահմանված չեն համապատասխան պարտականություններ:

Գործատուների հետ կապերը, չնայած գործընկերների տեղական ցանցի առկայությանը, դեռևս կանոնակարգված չեն և ամբողջ ներուժով չեն իրացվում:

ԼՏՊՔ-ն պատշաճ ուշադրություն չի դարձնում օտար լեզուների իմացությանը, թեև գրեթե բոլոր շահակիցները գիտակցում են խնդիրը:

Կարելի է եզրակացնել, որ ԼՏՊՔ-ում առկա չէ արտաքին կապերի համար անհրաժեշտ կարողությունների զարգացման ինստիտուցիոնալ ձգտում, իսկ իրավիճակային արտաքին կապերը չեն նպատակաուղղվում ԼՏՊՔ զարգացմանը:

Եզրակացություն

Հաշվի առնելով այն, որ ԼՏՊՔ-ն գրեթե ռեսուրս չի տրամադրում արտաքին կապերին և միջազգայնացմանը, իսկ արտաքին կապերը կանոնակարգված չեն և կրում են իրավիճակային բնույթ, չի կարևորում օտար լեզուների իմացության բարձրացմանն ուղղված աշխատանքները, գործատուների հետ համագործակցությունը չի նպաստում քոլեջի հետ համատեղ ռազմավարության իրականացմանը քոլեջում տարբեր ոլորտների զարգացման հետ կապված՝ փորձագիտական խումբը կարծում է, որ ԼՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրահանգում

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

X. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը նկարագրված են «Որակի ապահովման քաղաքականություն» և «Որակի ապահովման ուղեցույց (ուսումնամեթոդական ուղեցույց)» փաստաթղթերում: Ընդ որում՝ ուղեցույցը ներառում է քաղաքականության տեքստն ամբողջությամբ: Որակի ապահովման նկարագրված քաղաքականությունն ու ընթացակարգերը, սակայն, հիմնականում դեռևս ներդրված չեն: Բացի այդ՝ որակի ապահովման ընթացակարգերն ուղեցույցում հիմնականում նկարագրված են մակերեսային՝ առանց այնպիսի մանրամասների, որոնց առկայությամբ միայն դրանք հնարավոր կլինի լիարժեք ներդնել: Հարկ է նշել, որ ուղեցույցում ներառված ընթացակարգերի մի մասը ՈԱ գործընթացներին չի առնչվում (օրինակ՝ գնումների կազմակերպման ընթացակարգը): Փորձագիտական առցանց այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ ՈԱ փաստաթղթերի մշակումն իրականացվել է այլ հաստատությունների փորձի հիման վրա, և դրա համար ԼՏՊՔ կարիքների գնահատում չի իրականացվել:

2020 թ. փետրվարին ԼՏՊՔ կառուցվածքում նախատեսվել է որակի ապահովման կենտրոն՝ համաձայն լիազորված մարմնի կողմից տրամադրված օրինակելի հաստիքացուցակի, և հաստատվել է դրա գործունեության կարգը: Համապատասխան ռեսուրսներ, սակայն, ԼՏՊՔ կողմից չեն հատկացվել, և ՈԱ պատասխանատուի հաստիքը չի համալրվել: ԼՏՊՔ-ում ՈԱ պատասխանատուներ են համարվում տնօրենի տեղակալները (հասարակական հիմունքներով): Բացի այդ՝ փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ԼՏՊՔ տեսանկյունից ՈԱ պատասխանատուի հաստիքը ձևավորվել է առաջին հերթին հավատարմագրման համար, ինչպես նաև կարիերայի կենտրոնին օգնելու և այլ խնդիրներ լուծելու համար:

ԼՏՊՔ ուսանողները մասնակցում են դասընթացների և դասախոսների գնահատման հարցումների, սակայն այդ հարցումների արդյունքները չեն կարևորվում (այդ թվում՝ հենց ուսանողների կողմից) և էական հետևանքներ չեն ունենում: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները, որոնց կազմում ընդգրկվում են գործատուներ, ներկայացնում են հաշվետվություններ: Փորձագիտական առցանց այցի ընթացքում պարզ դարձավ, որ ավարտելուց հետո ԼՏՊՔ շրջանավարտները չեն ընդգրկվել ՈԱ գործընթացներում:

Շահակիցներից ստացվող տեղեկությունների հիման վրա առանձին փոփոխություններ ԼՏՊՔ-ում կատարվում են, սակայն թե՛ այդ տեղեկությունների հավաքագրումը, թե՛ դրանց օգտագործումը կրում են իրավիճակային բնույթ՝ հիմնվելով փոքր միջավայրում անձնական շփումների վրա: Փորձագիտական առցանց այցի ընթացքում նաև պարզ դարձավ, որ շահակիցները տեսնում են առանձին ոլորտներում բարելավման կարիքներ, սակայն առաջարկում են խնդիրների լուծման հաճախ հակադիր ուղիներ:

Քանի որ որակի ներքին ապահովման համակարգը դեռևս ձևավորված և ներդրված չէ, դրա պատշաճ գնահատում չի իրականացվել: Այդուհանդերձ, անցկացվող հարցումների արդյունքներն, ըստ ԼՏՊՔ ինքնավերլուծության, կարող են ոչ հավաստի լինել, սակայն ԼՏՊՔ-ն չի իրականացրել այդ մեխանիզմի բարելավում:

ԼՏՊՔ գործընթացների որակի վերաբերյալ տվյալները չեն համակարգվում, հաշվետվություններ չեն կազմվում: Ինքնավերլուծության մեջ նկատելի է վերլուծականության և ինքնաքննադատության պակաս: Հանրությանը հասանելի տեղեկությունները չեն բնութագրում գործընթացների որակը: Ներքին շահակիցների՝ ուսանողների համար իրենց իսկ մասնակցությամբ հարցումների արդյունքները ևս թափանցիկ չեն:

Դատողություններ

Թեև ԼՏՊՔ-ն ունի փաստաթղթերում նկարագրված որոշ ընթացակարգեր, դրանք հիմնականում դեռևս չեն կիրառվում և լիարժեք չեն էլ կարող կիրառվել, քանի որ դրանց նկարագրությունները մակերեսային են և պահանջում են հետագա մանրամասնում: ՈԱ փաստաթղթային այն հիմքը, որն առկա է ԼՏՊՔ-ում, թեև ավելի շատ գործընթացներ է ենթադրում, քան փաստացի իրականացվողները, չի բխեցված հենց ԼՏՊՔ կարիքներից: Դա նպաստում է ՈԱ գործընթացները չկարևորելուն:

ՈԱ գործընթացները չկարևորելու մասին է վկայում նաև այն, որ արդեն տևական ժամանակ է, ինչ ռեսուրսներ չեն հատկացվում, թեև դրանք նախատեսված են: ՈԱ ենթակառուցվածքի ձևավորումը կարծես չի էլ դիտարկվում՝ որպես առաջին հերթին ներքին գործընթացների բարելավմանը նպաստող համակարգ: Այս տեսանկյունից հատկանշական է նաև այն, որ ՈԱ պատասխանատուներ են համարվում տնօրենի տեղակալները, այսինքն՝ պաշտոնյաները, ովքեր կազմակերպիչն են այն գործընթացների, որոնց որակը պետք է ապահովվի: Փորձագիտական խումբը կարծում է, որ նման դեպքում չափազանց բարձր է շահերի ներքին բախման ռիսկը, քանի որ անձն ստիպված է լինելու գնահատել իր իսկ կատարած աշխատանքը:

Հարկ է նշել, որ ՈԱ որոշ գործընթացներ ԼՏՊՔ-ում այդուհանդերձ ընթանում են, սակայն դրանք համատարած չեն կարևորվում: ՈԱ գործընթացների հետևանքների բացակայության կամ աննկատության պայմաններում վտանգվում է նաև բուն գործընթացը, քանի որ, օրինակ՝ հարցումները չկարևորող ուսանողն այլևս կարող է ոչ հուսալի, գուցե ձևական մասնակցություն ունենալ այդ հարցումներին: Բացի այդ՝ բավական թույլ է արտաքին և ներքին շահակիցների մասնակցությունը ՈԱ գործընթացներում, ինչը նաև նշանակում է, որ ԼՏՊՔ ՈԱ համակարգը չի կարելի համարել ապակենտրոնացված:

Շահակիցների շրջանում առկա հակադիր մոտեցումները վկայում են այն մասին, որ ԼՏՊՔ-ում չեն իրականացվում բարելավումների վերաբերյալ պատշաճ քննարկումներ և վերլուծություններ: Այդ պարագայում տեղեկությունների հավաքագրման՝ անձնական

կապերի վրա հիմնված իրավիճակային մոտեցումը վտանգներ է պարունակում, քանի որ ստացված տվյալները կարող են չարտացոլել իրականում առկա կարիքները:

Ընդհանուր առմամբ նկատելի է, որ ԼՏՊՔ-ում որակի ապահովման մոտիվացիան դեռևս թույլ է, ինչի մասին է վկայում նաև այն, որ ՈԱ գործընթացները չեն բարելավվում, թեև դրանց թերությունները որոշ չափով նկատվել և արձանագրվել են:

Եզրակացություն

Հաշվի առնելով ԼՏՊՔ-ում ՈԱ քաղաքականության և ընթացակարգերի հիմնականում ներդրված չլինելը, իրականացվող ՈԱ գործընթացների չհամակարգված և իրավիճակային բնույթը, ՈԱ գործընթացները և կարողությունների ձևավորումը չկարևորելը, ներքին և արտաքին շահակիցների ոչ լիարժեք մասնակցությունը, ՈԱ պատասխանատուի պարտականությունների ոչ հստակությունը, այս ոլորտում կարողությունների զարգացման անհրաժեշտությունը, տվյալների հավաքագրման ու վերլուծության մեխանիզմների ոչ լիարժեքությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԼՏՊՔ որակի ապահովման ներքին համակարգը բավարար չի նպաստում հաստատության գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Եզրահանգում

ԼՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատվում է անբավարար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Չի բավարարում
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Տիգրան Մնացականյան, փորձագիտական խմբի ղեկավար

Ամսաթիվ՝ 01 փետրվարի, 2021 թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Տիգրան Մնացականյան – 2008 թ.-ին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ)՝ «Կառավարում» մասնագիտությամբ: 2011 թ.-ին շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան՝ «Հանրային կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները (ՀՀ օրինակով)» թեմայով: 2011 թ.-ից ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ է: 2008-2011 թթ.-ին հանդիսացել է ՀՊՏՀ ուսանողական գիտական ընկերության խորհրդի նախագահ: Հրապարակել է մի շարք գիտական հոդվածներ կառավարման տեսության, հանրային կառավարման պատմության, հանրային կառավարման ժամանակակից հիմնախնդիրների և արդյունավետության գնահատման մեթոդաբանության ու բարձրացման, տեղական ինքնակառավարման հիմնախնդիրների վերաբերյալ: Մասնակցել է բարձրագույն կրթության որակի բարձրացման հարցերին նվիրված միջազգային գիտաժողովների:

Հեղինե Մուղումյան – 1997 թ.-ին ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Հաշվողական համակարգերի և ցանցերի տեխնիկական միջոցներ» մասնագիտությամբ: 2000 թ. -ից առ այսօր աշխատում է «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես «Հեռահաղորդակցման համակարգեր» աբիոնի վարիչ, դասախոս:

Լիլիթ Ներսիսյան - 2011 թ.-ին ավարտել է Երևանի «Մշակույթ» համալսարանը «Արվեստագիտության» բակալավրի աստիճանով (դիզայն գեղարվեստ մասնագիտությամբ): 2013 թ. -ին ավարտել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանը «կերպարվեստ և գծագրություն» մասնագիտությամբ, մագիստրոսի աստիճան: 2016 թ.-ից առ այսօր սովորում է (հայցորդ) Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում: Պաշտպանության թեման է «Հայկական զարդարվեստը սովորողների գեղագիտական կրթության համակարգում (գեղարվեստի քոլեջների օրինակով)»: 2013 թ.-ից առ այսօր աշխատում է Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում՝ որպես դիզայն ամբիոնի դասախոս:

Նարեկ Հարությունյան - Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ուսանող: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողնության ձայն» նախագծի ուսանող փորձագետների վերապատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	30.11.2020թ			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ			9:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քելեջի փոխտնօրենների հետ			11:00	12:00	60 րոպե
3.	Հանդիպում քոլեջի խորհրդի անդամների հետ			12:30	13:20	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:30	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)			14:45	15:45	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:30	18:30	120 րոպե
	01.12.2020թ			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների (բաժնի վարիչների) հետ (Հանրակրթ. ծրագր. բաժնի վարիչ, Տնտես. և հաշվող. տեխն. բաժնի վարիչ, Թեթև արդյունաբ. և զբոսաշրջ. բաժնի վարիչ)			9:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)			11:20	12:20	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			12:30	13:30	60 րոպե
4.	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)			13:45	14:45	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների ներկայացուցիչների հետ (10-12 հոգի			15:15	16:15	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:00	19:00	120 րոպե
	02.12.2020թ.			*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Զուգահեռ հանդիպում. Հագուստի մոդելավորում և նախագծում ՄԿԾ դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	Մենեջմենթ (կառավարում) ՄԿԾ դասախոսների ներկայացուցիչներ ի հետ (8-10 հոգի)	Հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում ՄԿԾ դասախոսների ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	9:30	10:30	60 րոպե
2.	Զուգահեռ հանդիպում. Հագուստի մոդելավորում և նախագծում ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Մենեջմենթ (կառավարում) ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	Հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում ՄԿԾ ուսանողների հետ (8-10 հոգի)	11:15	12:15	60 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			12:30	13:30	60 րոպե
4.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի ուղղորդման պատ., պրակտիկայի ղեկավար, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, կադրերի բաժնի տեսուչ)			13:45	14:45	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ			15:15	15:55	40 րոպե

6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում և փաստաթղթերի ուսումնասիրություն	17:00	19:00	120 րոպե
	03.12.2020թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	9:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	11:00	11:40	40 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	12:00	12:40	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:15	15:15	60 րոպե
6.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15: 30	17: 00	90 րոպե
7.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթուղթ	Չափանիշ
1.	Կատարողականների վերլուծություններ Մեթոդխորհրդի նիստերի արձանագրություններ (այն նիստերի, որոնց ընթացքում քննարկվել են կատարողականների վերլուծություններ և ընդունվել են համապատասխան որոշումներ)	1
2.	Խորհրդի նիստերի արձանագրություններ	2
3.	Քոլեջի ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, նրանց խրախուսման կամ պատասխանատվության ենթարկելու ուղեցույց /2011թ. /	2
4.	Թեթև արդյունաբերության և զբոսաշրջության բաժնի, Տնտեսագիտության և Հաշվողական տեխնիկայի բաժնի աշխատանքային պլան	2
5.	Դասախոսների գնահատման թերթիկ	4
6.	Շրջանավարտների տվյալների մատյան	4
7.	Կարիերայի կենտրոնի կանոնակարգ, աշխատանքային գործունեություն, հարցումների տվյալներ	5
8.	Ստորաբաժանումների գործունեության կարգ /արխիվ, գրադարան, պրակտիկա, կադրերի բաժին/	2
9.	Ուսումնական գործընթացի ժամանակացույց	3
10.	Տարբեր ՄԿԾ-ների գնահատման թերթիկներ	3
11.	Կուրսային աշատանքների կատարման կարգ	3
12.	«Վեբ ծրագրավորում» առարկայի շրջանակում պատրաստված կայք էջի օրինակ	3
13.	Գնահատման թերթիկ /1-ից մինչև 7-րդ արդյունք/ ոչ ամբողջական	3
14.	Տարբեր ստորաբաժանումների տարեկան պլանների օրինակներ /գրադարան, ուսումնամեթոդական խորհուրդ, ուսումնական մաս/	2
15.	Նիստերի արձանագրություններ /Թեթև արդյուաբերության և	2

	զբոսաշրջության բաժին, Հանրակրթության բաժին, Տնտեսագիտությոան և հաշվողական տեխնիկաի բաժին/	
16.	Դասացուցակներ /բոլոր դասացուցակներ/	3
17.	Մատյաններ /վերջին երեք տարվա ամեն կուրսից մեկական օրինակ/	3
18.	Ավարտական աշխատանքներ /Հագուստի մոդելավորում և նախագծում ՄԿԾ/	3
19.	Դասալսումների մատյաններ /Հանրակրթական առարկանների բաժին, Թեթև արդյունաբերության և զբոսաշրջության բաժին, Տնտեսագիտության և հաշվողական տեխնիկայի բաժին/	2
20.	Պրակտիկաների լրացրած օրագրեր /Հագուստի մոդելավորում և նախագծում, Տնտեսագիտություն և հաշվողական տեխնիկա/	3
21.	Վերապատրաստման փաթեթներ /Տաթևիկ Նավասարդյան, Վարդուհի Պողոսյան/	5
22.	Հաստիքացուցակ	5

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ
2. Մարզադահլիճ
3. Գրադարան-ընթերցասրահ
4. Խորհրդակցությունների սենյակ
5. Դասախոսական սենյակ
6. Համակարգչային լաբորատորիաներ
7. Վարչական անձնակազմի աշխատասենյակներ
8. Կարի արհեստանոցներ
9. Տպարան-հրատարակչություն
10. Միջոցառումների դահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
2. ԼՏՊՔ - Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ
3. ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր
4. ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն
5. ՈԱ - որակի ապահովում
6. ՈԱԱԿ - «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն« հիմնադրամ
7. ՊԴԿ - պրոֆեսորադասախոսական կազմ
8. ՌԾ - ռազմավարական ծրագիր
9. ՌՊ - ռազմավարական պլան
10. ՈՒԽ - ուսանողական խորհուրդ
11. ԶՏԿ - զբաղվածության տարածքային կենտրոն